

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

**ՈՂՋՈՅ ՐԱՅԱՍՏԱՆԻ
 ՐԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
 ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 15
 ԱՄԵԱԿԻՆ**

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Անցնող մի քանի շաբաթներում, առիթներով իմ հանդիպած անձներում հարց տուի.

.. Գիտե՞՞ք, Սեպտեմբերի 21ը Հայաստանի Հանրապետության անկախության 15ամեակն է. Ի՞նչ կրնայ ըլլալ ձեր տպավորությունը այդ կապակցությամբ:

Ահա այն հարցումը որ խմբագիրներ, մամուլի մարդիկ, քաղաքական գործիչներ, եկեղեցիներու խորաններու ու բեմերու հոգևոր եւ աշխարհական առանձնաշնորհներ առհասարակ հարց կու տան իրենք իրենց ու յատուկ յոգուածով եւ կամ հրապարակային ելոյթով մը կը բանաձեւեն իրենց տեսակետը: Հայ ընթերցասէր կամ հանդիսատես հասարակութիւնը, մեկնելով այդ անձներուն քաղաքական արեւելումէն, ի սկզբանէ կրնան հետեցնել անոնց տալիք պատգամը:

Պատահականօրէն ինձի հանդիպած մարդիկը կը պատկանէին այնուայն շրջանակներու: Ուսանողներ, բժիշկներ, ազգի ու հայրենիքի յանազան սակներ, քաղաքական հոստոտութիւն ունեցող լոկալացի մարդիկ, արուեստագէտներ, պարզ մարդիկ՝ մէկ խօսքով, այսպէս ըսուած՝ «լուր մեծամասնութեան» ներկայացուցիչներ, որոնց տուած տպավորութիւններուն վրայ ուզեցի կառուցանել այս անգամ մեր հայրենի հանրապետութեան հիմնադրութեան 15 ամեակին նուիրուած իմ «Մեր Անկիւնը»:

«Ես կը հաւատամ որ անկախութիւնը առիթ տուաւ ինձի որ հաւասար է հաւասար կարենամնայիլ UCLA-ի դասընկերներուս՝ հրեայ ժագոպին, իտալացի Սեպասթիանին, մեքսիկացի Ռոյանտոյին եւ ամերիկացի Մայքին աչքերուն: Այսօր աւելի քան հարիւր եւ հայ ծնելուս համար» ըսաւ Թային (21 տարեկան), երբ առիթով մը, իրենց տան աւագանին շուրջ կը խօսէինք իր ընտրած լրագրական ուսումնական միջոցին եւ ծրագրներուն մասին:

«Ես բան ըրած ու տուած չեմ Հայաստանի անկախութեան, որ

Շարք էջ 16

**ՐԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՌԷ ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ
 ԲԱՑՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ**

«ՍՓԻՌԷԻ ԿՈՂՄԷ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՄ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԱԶԴԱԿ ԿԸ ՐԱՆԴԻՍԱՆԱՅ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ», - ԸՍԱԻ ՐԱՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ

Սեպտեմբեր 18-ին Երեւանի կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին ներս կատարուեցաւ բացումը Հայաստան-Սփիւռք երրորդ խորհրդաժողովի մասնակցութեամբ պետական քաղաքական եւ հասարակական գործիչներու:

Առաջին նիստի ընթացքին ելոյթներ ունեցան Ռոբերտ Քոչարեան, ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա., Հայ կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիներու ներկայացուցիչները, Հնչակեան, Ռամկավար եւ Դաշնակցական կուսակցութեանց ներկայացուցիչները, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Ամերիկայի Հայկական Համագործակցութեան հիմնադրամի, ՀԲԸՄ-ի եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Քոչարեան իր ելոյթին մէջ անդրադարձաւ երկրորդ համաժողովին ասդին՝ վերջին 4 տարիներուն «Հայաստանում արձանագրուած առաջընթացի»: Ան ըսաւ ժամանակամիջոցին տարեկան տնտեսական աճը կազմած է 12,2 տոկոս:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հարցին Քոչարեան յայտարարեց. «Մի քանի անգամ մօտ էինք պայմանագիր կնքելուն, որը կ'ամրագրէր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ապրելու իրաւունքը»:



Հայաստան-Սփիւռք երրորդ խորհրդաժողովի բացման նիստը

ըր: Ափսոսանքով եմ ասում, որ դա չլաջողուեց»:

Խորհրդաժողովը վարող՝ Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան, յայտնեց թէ այս խորհրդաժողովի գլխաւոր նպատակը Հայաստանի գիւղական շրջաններու զարգացման ծրագիրն է: «Գիւղական շրջանների զարգացման համար այսօր անհրաժեշտութիւն կայ միջամտութեան», - ըսաւ ան աւելցնելով թէ մինչեւ 2020 թուականը կարելի է ապահովել Հայաստանի ամբողջական զարգացումը:

«Եթէ տարեկան մենք գնանք

ոչ թէ 8-9 մլն տոլարի, այլ 20-30 մլն տոլարի, որը սփիւռքի պոտենցիալի

Շարք էջ 4

**ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱՐՆՈՒՏ ՇՈՒԱՐՁԸՆԻԿԸՐ ԿԸ
 ՇՆՈՐՀԱԻՐՈՒ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
 15-ԱՄԵԱԿԸ**

Քալիֆորնիոյ կառավարիչ Արնոլտ Շուարզընիկը Հայաստանի անկախութեան 15-ամեակի առթիւ հանդէս եկաւ պաշտօնական յայտարարութեամբ մը՝ սրտազին շնորհաւորութիւնները յղելով հայութեան:

«Միշտ ալ յատուկ առիթ է, երբ մարդիկ կը հաւաքուին իրար հետ, իրենք աւանդույթներով հպարտանալու համար եւ ես պատիւը ունիմ միանալու Ամերիկահայ համայնքին՝ այս սոնական օրուայ առթիւ: Դուք կը հարստացնէք մեր երկիրը. յատկապէս մեր նահանգը՝ ձեր աշխատասիրութեամբ, ծառայասէր ոգիով եւ հրաշալի մշակութային աւանդույթներով: Շնորհակալութիւն ձեր բերած նպաստին՝ Քալիֆորնիոյ իւրաքանչեւ եւ յարաճուն կերպով այլազանութեան», ըսուած է կառավարիչի ողջունի գիրին մէջ:

«Բոլոր քալիֆորնիացիներու անունով հաճեցէք ընդունիլ իմ լաւագոյն մաղթանքները, իմաստալից սոնակատարութեան եւ յառաջիկայ բոլոր յաջողութիւններուն համար», - եզրակացնելով կը յայտնէ նահանգապետ Արնոլտ Շուարզընիկը իր յայտարարութեան մէջ:

**Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԻ
 ԵՒ Շ.Յ.Դ. ԲԻՐՈՅԻ
 ՄԻՋԵՒ ԸԱՆԴԻՊՈՒՄ**

Սեպտեմբեր 16-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի միջեւ հանդիպում:

Հանդիպման մասնակիցները խօսեցան միջ-կուսակցական շարքերութիւններու սերտացման, Հայրենիք-սփիւռք երրորդ համաժողովի նպատակներու, Հայ Դատի, Արցախի հարցի արդարացի լուծման եւ այլ հարցերու մասին:

Հանդիպման Հնչակեան կուսակցութեանն կը մասնակցէին Կեդրոնի ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան, Կեդրոնի անդամ Ընկ. Հրանդ Ամիրեան եւ Ընկ. Տոքթ. Մացակ Փոլատեան:

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ հանդիպումին ներկայ էին Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, ՀՀ Խորհրդարանի փոխ նախագահ Վահան Յովհաննիսեան, եւ Բիւրոյի անդամ Ալբերտ Աճէմեան:

Ս.Դ.Հ.Կ. Մամոյ Դիւան

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ **ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 24, 2006 ԿԼԷՆՏԻՅԼԻ "VERDUGO PARK"

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00-ԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:00-Ը

ՐԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՕՍԿԱՆԵԱՆԸ ԼՈՒՐՁ ԶՎԵՐԱԲԵՐՈՒԵՑ

Երկար ջանքերից յետոյ Ատրպեյճանին ի վերջոյ յաջողուեց «Իրավիճակն Ատրպեյճանի գրաւեալ տարածքներում» անունը կրող բանաձեւ ընդունել տալ ՄԱԿ-ի ԳԱ-ում:

Այսպիսի նպատակ Ատրպեյճանը արդէն մի քանի տարի հետապնդում էր, սակայն եթէ նախկինում Հայաստանին յաջողուեց էր այս կամ այն կերպ խոչընդոտել ՄԱԿ-ի ԳԱ-ում նման վերնագրով բանաձեւի ընդունումը, ապա այս անգամ հայկական դիւանագիտութիւնը խայտառակ պարտութեան մատնուեց: Օրեր առաջ ՄԱԿ-ի ԳԱ-ում ընդունուեց Ատրպեյճանի կողմից կազմուած եւ նրա նախաձեռնութեամբ ԳԱ նստաշրջանի օրակարգ մտած «Իրավիճակն Ատրպեյճանի գրաւեալ տարածքներում» բանաձեւը, որի բովանդակութիւնը, ձիւղ է, դուրս չի գալիս գրաւեալ տարածքներում այս ամառ բռնկուած հրդեհների թեմայի ըրջանակներին, սակայն դա դեռ ոչինչ չի նշանակում: Այսինքն, եթէ ՄԱԿ-ի ԳԱ-ում ընդունուած բանաձեւը վերաբերում է միայն հրդեհներին, եւ եթէ նոյնիսկ ՀՀ եւ ԼՂՀ ԱԳ նախարարութիւնները բանաձեւի ընդունումից յետոյ յայտարարում են, որ դրա բովանդակութիւնն իրենց համար ընդունելի է, միեւնոյնն է, տեղի ունեցածը փաստում է տուեալ հարցում ատրպեյճանական դիւանագիտութեան յաղթանակի եւ հայկական դիւանագիտութեան պարտութեան մասին: Մասնաւորապէս, անկախ այն բանից, թէ ինչ է գրուած բանաձեւի տեքստում, նման վերնագրով բանաձեւի ընդունումը ՄԱԿ-ի ԳԱ-ում արդէն իսկ չի բխում ԼՂ հակամարտութեան գործընթացում Հայաստանի շահերից: Հնարաւոր է, իհարկէ, որ այս պահին դա ոչնչով չի էլ վնասում Հայաստանի շահերին, սակայն իր մէջ հետագայ լուրջ վտանգներ է պարունակում, ինչն արդէն բաւարար հիմք է տալիս բանաձեւի ընդունման փաստը ՀՀ դիւանագիտութեան պարտութիւն անուանելու համար: Միւս կողմից, ՄԱԿ-ի ԳԱ-ում ԼՂ հարցով որեւէ բանաձեւի ընդունումը վերջին տարիներին ատրպեյճանական կողմի համար կարծես թէ սկզբունքային հարց էր դարձել: ՄԱԿ-ի նախորդ ԳԱ նստաշրջանում Ատրպեյճանը նոյնպէս այս նոյն վերնագրով բանաձեւ էր ներկայացրել, որը մտել էր օրակարգ: Սակայն այն այդպէս էլ քուէարկութեան չգրուեց՝ ԼՂ բանակցութիւններից դուրս գալու ՀՀ սպառնալիքի շնորհիւ: Այս անգամ Հայաստանը կրկին գործի դրեց իր յայտնի տրոյկը, սակայն թերեւս ի մեծ զարմանս ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի, էլ ընթացիկ Մամեդեարովի հետ հանդիպումից հրաժարուելու նրա ուղեբձները ոչ մի ազդեցութիւն չթողեցին ոչ Ատրպեյճանի եւ ոչ էլ ԵԱՀԿ ՄԽ-ի վրայ: Նախորդ առիթով մենք արդէն նշել էինք, որ եթէ այս անգամ ՀՀ ԱԳ նախարարի սպառնալիքը իր նպատակին չհասնի, եւ բանաձեւն, այնուամենայնիւ, ընդունուի ԳԱ-ի կողմից, ապա դա կը նշանակի, որ ե՛ւ միջազգային հանրութիւնը, ե՛ւ ԵԱՀԿ ՄԽ-ն Հայաստանին սկսել են պարզապէս արհամարհել: Որքան էլ ցաւալի է՝ այս կանխատեսումն իրականանում է: Այլապէս ինչո՞ւ պետք է նոյն ԵԱՀԿ ՄԽ համանախագահները օգնէին Ատրպեյճանին, որպէսզի վերոնշեալ բանա-

ձեւն ընդունուի ՄԱԿ-ի ԳԱ-ում: Նրանք պարզապէս այս հարցում միջնորդի դեր են կատարել Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ՝ ի նպաստ Ատրպեյճանի: Սա երեւում է բանաձեւի առիթով Սեպտեմբերի 7-ին ՄԱԿ ԳԱ-ում հնչած ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արմէն Մարտիրոսեանի ելոյթից: «Մենք նման քայլը դիտում ենք որպէս խոչընդոտ բանակցութիւնները շարունակելու համար: Եւ քանի որ այն յստակօրէն քաղաքական նպատակներ էր հետապնդում, Հայաստանը դէմ հանդէս եկաւ այդ քայլին: Այնուամենայնիւ, Միւսկի իմբի համանախագահների հետ մեր բանակցութիւնների արդիւնքում մենք համաձայնութեան եկանք մի տեքստի շուրջ, որը պարզապէս վերահաստատում է իր աջակցութիւնը ԵԱՀԿ առաքելութեանը», - իր ելոյթում ասել է Արմէն Մարտիրոսեանը: Այս խօսքերից հաստատուել է դառնում, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները համոզել են հայկական կողմին, որպէսզի բանաձեւի ընդունումը Հայաստանը չդիտի որպէս խոչընդոտ բանակցութիւնները շարունակելու համար եւ դուրս չգալ բանակցութիւններից: Դրա համար հայկական կողմին հնարաւորութիւն է տրուել մի երկու սեփական շտկում մտցնել Ատրպեյճանի ներկայացրած բանաձեւի նախագծում: Եթէ նոյնիսկ ՄԽ համանախագահներն իրենց նախաձեռնութեամբ չեն ստանձնել այդ դերը, այլ շտկումներ անելու հարցում օգնել են Հայաստանին՝ վերջինիս խնդրանքով, ապա դա նոյնպէս չի խօսում հայկական կողմի օգտին: Այդ դէպքում նշանակում է՝ ՀՀ ներկայացուցիչները պարզապէս վստահ են եղել, որ, այսպէս թէ այնպէս, բանաձեւն ընդունուելու է ԳԱ-ում եւ, փոխելով տակտիկան, բանակցութիւններ են վարել՝ բանաձեւում Հայաստանի համար աննպաստ ձեւակերպումները մինիմումի հասցնելու համար: Մինչդեռ նախորդ շաբաթ լրագրողներին հետ գրոյցում ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը յայտարարեց, որ նախ պետք է վերացուեն միջազգային ատեաններում առաջացած խոչընդոտները եւ յետոյ միայն տեղի ունենան ԼՂ հարցով բանակցութիւնները: Խոչընդոտ ասելով՝ Վարդան Օսկանեանը նկատի ունէր ՄԱԿ-ի ԳԱ օրակարգում յայտնուած «Իրավիճակն Ատրպեյճանի գրաւեալ տարածքներում» բանաձեւը, իսկ դրանք վերացնել ասելով՝ իհարկէ նկատի ունէր բանաձեւը օրակարգից հանելը: Այնուամենայնիւ, Վարդան Օսկանեանը, համոզուած չլինելով, որ իրենք յաջողութեան կը հասնեն, որեւէ յստակ ձեւակերպում չտուեց՝ տեղ թողնելով, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում հնարաւոր լինի յայտարարել, թէ խոչընդոտ բանաձեւի նախնական տարբերակի ընդունումն էր, իսկ խոչընդոտի վերացումը՝ դրա մէջ համապատասխան փոփոխութիւններ անելը: Սակայն ով-ով, բայց ՀՀ ԱԳ նախարարը պէտք է որ լաւ հասկանայ, որ խնդիրը ոչ այնքան բանաձեւի բովանդակութիւնն է, որքան դրա ընդունուելու փաստը: Եւ իհարկէ, Օսկանեանն ամենից լաւ է հասկանում, թէ իրականում ինչ նպատակ է հետապնդում Ատրպեյճանը՝ այսպիսի բանաձեւ ՄԱԿ-ի ԳԱ մտցնելով: Եւ ահա «Իրավիճակն Ատրպեյճանի գրաւեալ տար-

«ՓՈՔՐԻԿ» ԼՐԱՑՈՒՄ ՍՓԻՌՔԻ ԶԱՄԱՐ

Աշխատանքի բերումով ժամանակին առիթ եմ ունեցել մի քանի տարի առնչուել սփիւռքահայութեան տարբեր շրջանակների հետ եւ այդ ընթացքում, ի թիւս արտասահմանում (առաւելապէս՝ հեռաւոր) բնակուող մեր հայրենակիցների բազմաթիւ դրական յատկանիշների, յայտնաբերել եմ եւս մէկը, որն ինքնին դրական լինելով՝ այս օրերին Հայաստանում ընթացող «Հայաստան-Սփիւռք» հերթական համաժողովի համատեքստում կարող է եւ ոչ այնքան դրական դեր ունենալ ներհայաստանեան իրողութիւնների օբիեկտիւ ընկալման առումով: Սփիւռքում շատ են սիրում բառեր ու յատկապէս՝ գեղեցիկ բառեր: Սփիւռքահայի համար բերկրանքը կրկնակի, եռակի է դառնում, երբ այդ բառերը վերաբերում են հայրենիքին: Ազնիւ սփիւռքահայն ուղղակի ըմբոշխնում է Հայաստանի օրաւոր հզօրացող սոստիտութեան, քաղաքական եւ հասարակական ինստիտուտների կատարելագործման, կրթամշակութային համակարգերի զարգացման, արտաքին քաղաքական ձեռքբերումների մասին հաղորդումները: Նա յատկապէս յուզուած է, երբ այդ տեղեկութիւնները ստանում է հենց այստեղ՝ Հայաստանում, եւ այն էլ, ինչպէս ասում են, առաջին ձեռքից՝ ՀՀ նախագահից: «Երկրորդ համաժողովից յետոյ անցած չորս տարին թէ Հայաստանում» բանաձեւի ընդունումը այս առումով այնքան էլ լաւ սկիզբ չէ Հայաստանի համար: Ընդհանրապէս, հրդեհների հարցը մի թեմա է, որն Ատրպեյճանը պինդ բռնել է բաց չի թողնում՝ նպատակ ունենալով էկոլոգիական աղէտից այն դարձնել լուրջ քաղաքական գործօն ԼՂ հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնների մէջ: Հասկանալի է, որ ՄԱԿ-ի ԳԱ-ում այդ բանաձեւի ընդունումը Ատրպեյճանին բաւական ոգեւորել է, եւ նա, այժմ այն դրօշի նման թափահարելով, փորձում է բոլոր հնարաւոր միւս ատեաններում նոյնպէս այդ հարցը բարձրացնել: Ինչեւէ, այս առիթով չի շեղուել ՀՀ ԱԳ նախարարի՝ այս ամռան սկզբին տեղի ունեցած ասուլիսներից մէկը, որի ժամանակ նրան հարց ուղղուեց գրաւեալ տարածքներում հրդեհների առիթով ատրպեյճանցիների բարձրացրած աղմուկի մասին: Այն ժամանակ ատրպեյճանական կողմը նորոնոր էր սկսել այս գործընթացը եւ ընդամենը բողոքի նամակներ էր յղում ԵԱՀԿ-ին, ԵՆ-ին եւ այլն: Հարցին ի պատասխան ՀՀ ԱԳ նախարարը յայտարարեց, որ ինքը դրանց լուրջ չի վերաբերում եւ պատմեց, որ երբ ինքը այդ հարցի շուրջ բացատրութիւն խնդրող նամակ է ստացել միջազգային կառույցներից, շատ խիստ պատասխանել է, որ ինքը ժամանակ չունի նման բաների վրայ վատնելու համար: Պարոն Օսկանեանի ինքնավստահ եւ խրոխտ տօնն այդ ասուլիսի ժամանակ, իհարկէ, տպաւորիչ էր, սակայն եթէ նա իմանար, որ ընդամենը երկու ամիս յետոյ այդ անլուրջ հարցի կապակցութեամբ ՄԱԿ-ի ԳԱ-ում բանաձեւ է ընդունուելու, թերեւս ձեռնպահ կը մնար նման ձեւակերպումներ օգտագործելուց: ԱՆՆԱ Վ. ՅԱՎՈՐԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

տանի, թէ հայկական մեծ համայնքներ ունեցող երկրների համար լի էին բազմաթիւ զարգացումներով: Կարծում եմ, որ այս համաժողովը հնարաւորութիւն է ընձեռում քննարկել այդ նոր իրականութիւնները»: ահա այսպէս է սկսել «Հայաստան-Սփիւռք» վերջին համաժողովին ունեցած իր ելոյթը Ռոբերտ Քոչարեանը: Հարկ չենք համարում ամբողջութեամբ անդրադառնալ այդ ելոյթի բովանդակութեանը: Նշենք միայն, որ թերեւս ինքն էլ հրաշալի տեղեակ լինելով ու հաշուի առնելով սփիւռքահայութեան վերոյիշեալ «բանասիրական» նախասիրութիւնը՝ Քոչարեանը Հայաստանի գանազան նուաճումների ու ձեռքբերումների կողքին խուսափեց առկա լրջագոյն խնդիրները ներկայացնելուց, եւ անգամ ՀՀ քաղաքացին կարող է մի ակնթարթ շփոթուել: Եւ ակամայ յանդգնելով փոքրինչ փչացնել սփիւռքի մեր հայրենակիցների տրամադրութիւնը, սակայն ձգտելով լրացնել հայրենիքի մասին նրանց ստացած տեղեկատուութեան պակասը, արձանագրենք «անցած չորս տարիներին» վերաբերող մի քանի իրողութիւն եւս:

Անցած չորս տարիներին Հայաստանում տեղի են ունեցել մինչ այդ նմանը չունեցած կեղծ ընտրութիւններ եւ հանրաքուէ, ինչը հասարակութեանն ընկղմել է իրական եւ առհասարակ՝ քաղաքացիական խոր նիհիլիզմի մէջ: Անցած չորս տարիներին երկիրն աննախադէպ նահանջ է կատարել առանց այդ էլ փխրուն ժողովրդավարութիւնից, իսկ անտեսութիւնը վերջնականապէս «յանձնուել է» օլիգարխներին եւ նրանց հովանաւորող պաշտօնեաներին:

ՏԻԳՐԱՆ ԱԻԵՏԻՍԵԱՆ «ԱՌԱՒՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ԱՌՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ ՎԱԶՁԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ 36. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՄԻՍ ՆԱԽԱԳԱՐԸ ՎԵՐՋՆԱԳԻՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԻՄ ՓՈԽՆԱԽԱԳԱՐԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏ-ԻՈՅ»: Շաբաթավերջին կայացած «Սահմանադրական իրաւունք» միութեան 17-րդ արտահերթ համաժողովում կուսակցութեան նախագահ վերընտրուած Հրանդ Խաչատրեանը երկուշաբթի, Սեպտեմբեր 18-ին հրաւիրած ասուխտում յայտարարեց, որ «երկիր-խանութիւն չի հանդուրժի» եւ «կը հեռանայ քաղաքականութիւնից», եթէ մինչեւ չորեքշաբթի օրը նոյն համաժողովում կուսակցութեան փոխնախագահ ընտրուած Հայկ Բաբուխանեանն առնուազն երեք ամսով չզդարարեցնի ՄԻՄ փոխնախագահի իր լիազօրութիւնները:



Սահմանադրական իրաւունք միութեան հիմնադիր Հրանդ Խաչատրեան

«Ես կը հեռանամ քաղաքականութիւնից՝ գնահատելով դա ոչ թէ որպէս ինչ-որ մէկի՝ իմ դէմ ուղղուած գործողութիւնների արդիւնք, այլ՝ ես ինձ կ'զգամ առանց յենարանի՝ իմ անկախ, ինքնուրոյն գործունէութիւնը ծաւալելու համար», - լրագրողներին ասաց Խաչատրեանը:

Հայկ Բաբուխանեանը, ով նաեւ «Իրաւունք» թերթի խմբագրական խորհրդի նախագահն է, Հրանդ Խաչատրեանի վերջնագրի առիթով «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց. - «Ոչինչ էլ չեմ պատրաստուած անել այդ առումով»:

«Որովհետեւ ինձ ընտրել է համաժողովը, ընտրել է ձայների մօտ 95 տոկոսով, եւ այս պահին ես կատարում եմ մեր համաժողովի կամքը՝ մնալով ՄԻՄ փոխնախագահ», - փաստարկեց նա՝ հարցին էլ, թէ այդ դէպքում չի փոխապահ, եթէ Հրանդ Խաչատրեանը, ինչպէս յայտարարել է, հեռանայ քաղաքականութիւնից՝ պատասխանելով. - «Ես բազմիցս կոչ եմ արել... հրաժարուել այդ քայլից: Ես կոչ եմ արել իրեն նաեւ համագումարում այդ յոյզերը, կրքերը կասեցնել, անցնել ստեղծագործ աշխատանքի»:

Հրանդ Խաչատրեանը, մինչդեռ, իր վստահութեան հարցը նաեւ հասարակութեան առջեւ է դնում. - «Եթէ հասարակութիւնը, դուք բոլորդ միասին կը պնդէք, որ ձեզ պէտք է Հայկ Բաբուխանեանը՝ որ-

պէս կոնիւնկտուրային գործիչ, ես մի պայման ունեմ՝ չպահանջէք, որպէսզի ես մնամ այս կուսակցութեան նախագահը, եւ չպահանջէք, որպէսզի կուսակցութիւն անունը մնայ «Սահմանադրական իրաւունք» միութիւն»:

Երկուսն էլ փոխադարձաբար միմեանց մեղադրում են հիւանդագին կասկածամտութեան մէջ: Հրանդ Խաչատրեան պնդում է, թէ շաբաթ օրը ձախողուց Հայկ Բաբուխանեանի՝ վերջին ամիսներին նախապատրաստած յեղաշրջումը կուսակցութիւնում: Հրանդ Խաչատրեանը պնդում է նաեւ, թէ կուսակցութիւնը հասել է այնպիսի մի վիճակի, երբ պարզապէս հոգ է ստեղծուել «դրսից վերահսկելիութեան», «քաղաքական գովազդի», «հովանաւորչութեան» համար:

«Մինչեւ օրս», - ասաց Խաչատրեանը, - «կուսակցութեան գոյութեան համար միջոցները հայթայթուել են ոչ կրիմինալ ճանապարհով, բայց, այնուամենայնիւ, եղել են որոշ կոմպրոմիսներ քաղաքական գովազդի առումով»:

Հայկ Բաբուխանեանի պնդմամբ՝ «Իրաւունք» թերթը գործել է «թերթի կանոնադրութեան հիման վրայ».

- «Մենք այդ կանոնակարգը չենք խախտել»: Խաչատրեանի կարծիքով, հակամարտութիւնը սկսուել է թերթի հետ կապուած ֆինանսական որոշ հարցերում անհամապատասխանութիւնների պատճառով: Բաբուխանեանը, մինչդեռ, պնդում է, թէ «ստեղծակ չէ» եւ «որեւէ հակամարտութիւն պարոն Խաչատրեանի հետ չունի»:

ՏՇՇ-Ն ՄՏԱԳԻՐ Է ՄԱՍՆԱԿՅԵԼ 2007-Ի ԽՈՐԷՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐԻՆ

Հայոց համագալին շարժումը (ՀՀՇ) պատրաստուած է մասնակցել 2007 թուականի խորհրդարանական ընտրութիւններին՝ այլ քաղաքական ուժերի հետ կազմելիք դաշինքով:

Կուսակցութեան վարչութեան անդամ Արամ Մանուկեանը չմասնաւորեցրեց, թէ յատկապէս որ քաղաքական ուժերի հետ է ՀՀՇ-ն դաշինք կազմելու: Նպատակը, ըստ նրա, «գաղափարի շուրջ համախմբուելն է», իսկ գաղափարը «անկախութեան պահպանումն է», որը, 15 տարի առաջ Անկախութեան հռչակագիրը առաջին անգամ ընթերցած Արամ Մանուկեանի համոզմամբ՝ «այսօրուայ իշխանութիւնները վտանգել են»:

Գրեթէ 7 տարի ընդմիջումից յետոյ, կրկին լոյս կ'ընծալուի կուսակցութեան «Հայք» թերթը, ինչը նոյնպէս վկայում է, որ ՀՀՇ-ն մտադիր է վերադառնալ ակտիվ քաղաքականութիւն:

ՍԵՂԱՐԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵԼ Է ՇԱՐՆ ԸՈՎԱՍԱՓԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հարկային Պետական ծառայութեան օպերատիւ-հետախուզութեան վարչութեան պետ Շահէն Հովասափեանի սպանութեան փաստի առթիւ յարուցուած քրէական գործով կալանաւորուած հարկայինի 7-րդ վարչութեան պետ Արմէն Վիրաբեանին ու նրա եղբորը ներկայացուել է մեղադրանք, այդ մասին Սեպտեմբերի 18-ին տեղեկացնում է Գլխաւոր Դատախազութիւնը:

Դատախազութիւնը առանց պաշտօնների մասին յիշատակելու նշում

ՇԱԿԱԿՐԻՄԻՆԱԼԻՍՏՆԵՐԸ ՅՍՏԱԿ ԱՆՈՒՆԵՐ Կ'ԱՍԵՆ ՅԱՌԱՋԻԿԱՅԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հակակրիմինալ շարժմանը» ներգրաւուած շուրջ 18 ընդդիմադիր եւ իշխանամէտ կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահութեամբ հաւաքուել էին ստեղծելու մի փաստաթուղթ, որով պէտք է յատկեցնէին իրենց առաջիկայ անելիքները:

ՀՀ բոլոր կուսակցութիւններն ընդգրկուած են այս շարժմանը, բացի «Հանրապետական»-ից, որը նաեւ հանդիպմանը հրաւիրուած չէր, քանի որ «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանի փոխանցմամբ, այս կուսակցութիւնը պաշտպանում է կրիմինալը. «Երբ յայտարարեցինք, որ սկսում ենք հակակրիմինալ շարժում, «Հանրապետական»-ն ընդվզեց, թէ մեր դէմ է՞ք քայլեր ձեռնարկում: Սրանից յետոյ մենք կարող ենք միայն նրանց տեղեակ պահել»:

Յաջորդ հանդիպումն ամենայն հաւանականութեամբ տեղի կունենայ սեպտեմբերի 25-ին, իսկ եկող չորեքշաբթի հանդիպման ներկաների առաջարկով «Նոր ժամա-

նակներ» կուսակցութիւնը կը կազմի ընդհանուր փաստաթղթի նախագիծ: Այս նախագիծը կը բաժանուի կուսակցութիւններին եւ քննարկման կը դրուի սեպտեմբերի 25-ի հանդիպմանը, դրանից յետոյ միայն կուսակցութիւններն այն կ'ստորագրեն:

«Ազգային միաբանութիւն» կուսակցութեան առաջարկով փաստաթղթում կը նշուեն յատակ անուններ, որպէսզի պարզ լինի, թէ ում դէմ պէտք է իրենք պայքարեն: Սա Արամ Կարապետեանը համարեց «մէկ քայլ առաջ» իրենց որոշումների իրականացման ճանապարհին: Իսկ, օրինակ՝ «Հայրենիք եւ պատիւ» կուսակցութիւնն արդէն իրենց 10-րդ հերթական ֆորումում ընդունել է 2 փաստաթուղթ, որոնցում մասնաւորապէս պահանջում են Սերժ Սարգսեանի՝ իր բոլոր պաշտօններից հրաժարականը, իսկ յետոյ յանձնուել արդարադատութեանը:

«Նոր ժամանակներ» կուսակցութիւնն այն կարծիքին է, որ ժողովուրդը մինչեւ ընտրութիւններ իրավիճակի յատակ փոփոխութիւն է պահանջում, իսկ աւելի կոնկրետ՝ իշխանափոխութիւն:

«ԲՈՒԱՏԵՐՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻ Է ՊԵՏԶ»

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: ՀՀՇ վարչութեան անդամ Դաւիթ Շահնազարեանը Սեպտեմբերի 19-ին յայտարարեց, որ Հայաստանի ղեկավարութեան համաձայնութեամբ արդէն ՄԱԿ-ի օրակարգ է մտել «Ատրպէյճանի օկուպացուած տարածքների իրավիճակի հարցը»:

«Սա փաստաթղթի ձեւակերպումն է, այսինքն առաջին անգամ պաշտօնապէս Հայաստանը ընդունել է, որ այս տարածքները օկուպացուած են», յայտարարեց Դաւիթ Շահնազարեանը: Էլ աւելի ցաւալի է, որ «որեւէ բան չի փորձել անել», իշխանութիւններին նկատի ունենալով նկատում է Դաւիթ Շահնազարեանը, առաջարկելով լուծումներ՝ փորձել ՄԱԿ-ում քննարկել Նախիջևանում, Նոր-Ջուղայում հայկական յուշարձանների ջարդի հարցը: Եթէ մէկը կ'ասի, որ դա ԵՈՒՆԵՍԿՕ-ի հարցն է, ապա դրա պատասխանն էլ կայ. «հրեհներն էլ հրէջ ծառայութեան հարցն է: Եթէ Ատրպէյճանին յաջողուած է, մեզ ինչու չի յաջողում»: Ըստ Դաւիթ Շահնազարեանի, իշխանութիւնները նոյնիսկ չեն յաջողում արձանագրել, որ եռանախագահների առաջարկները մերժել է Ատրպէյճանը:

Դաւիթ Շահնազարեանի կարծիքով, կարելի էր փորձել ԱՄՆ հայկական կազմակերպութիւնների ջանքերով ստուգուած վիճակից հանել 907 բանաձեւը, որով սահմանափակում էր Ատրպէյճանին ԱՄՆ օգնութեան հնարաւորութիւնը: Մինչդեռ «հայկական կազմակերպութիւնները օգտագործում են Հայաստանում ԱՄՆ ղեկավարի հարցի

առիթով: Դա օգուտ չի, աւելի ճիշդ վնաս է մեր պետականութեանը: Եթէ ինչ-որ սենատոր պահանջում է, որ նոր դեսպանը հրապարակաջօրէն ընդունի ցեղասպանութիւնը, ես այդ սենատորին խորհուրդ կը տայի այդ հարցը դնել թուրքայում ԱՄՆ դեսպանի առաջ, որովհետեւ Հայաստանում այդ հարցի հետ որեւէ մէկը ինդիր չունի»:

Դաւիթ Շահնազարեանը չինսայեց նաեւ Ղարաբաղի իշխանութիւններին: «Նրանց մօտեցումը աւելի քան յանցագործութիւն է, դա կատարուած է 1998 թուականից: Ասում են Ղարաբաղը պէտք է բանակցութիւնների կողմ լինի: Այդ յայտարարութիւնները լուրջ չեն ընդունուելու, որովհետեւ Քոչարեանը բազմիցս յայտարարել է, որ ինքը ներկայացնում է թէ Հայաստանը, թէ Ղարաբաղը: Թող Ղարաբաղի իշխանութիւնները պարզ յայտարարեն, որ Քոչարեանը չի ներկայացնում Լեռնային Ղարաբաղը: Բայց դա նրանք չեն կարող անել»:

Դառնալով վարչապետ Անդրանիկ Մարգարեանի այն տեսակետին, թէ ՀՀ-ում իշխանութիւնների քննադատութիւնը կարող են մեր դէմ օգտագործել այլ երկրներ, Դաւիթ Շահնազարեանը ասաց, որ բռնատիրութիւններին միշտ էլ արտաքին եւ ներքին թշնամիներ են պէտք: «Մեր ամենամեծ թշնամին մեր իշխանութիւններն են: Ոչ մի թշնամի այնքան վատութիւն չի արել մեր պետականութեանը, որքան այսօրուայ իշխանութիւնները», կարծում է Դաւիթ Շահնազարեանը:

է, ու նաեւ ծանուցում է, որ նախաքննութեան ընթացքում ձեռք բերուած ապացոյցների հիման վրայ՝ Ա. Վիրաբեանին եւ Գ.Վիրաբեանին 2006 թուականի Սեպտեմբերի 16-ին մեղադրանք է առաջադրուել ՀՀ քրէական օրէնսգրքի 104-րդ յօդուածի 2-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կէտերի, 34-104-րդ յօդուածի 2-րդ մասի 1-ին եւ 7-րդ կէտերի եւ 235-րդ յօդուածի 1-ին մասի յատկանիշներով, նրանց նկատմամբ որպէս խափանման միջոց է ընտրուել կալանքը:

Յիշեցնենք, որ համաձայն լուրերի, արդէն խուզարկութիւններ են եղել Վիրաբեանների ամառանոցում, նրանց սեփականութիւն՝ «Սեմուր & Կո.» ընկերութիւնում:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՅԱՍԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Անցեալ Չորեքշաբթի Սեպտեմբեր 13ին, 2006 երեկոյեան ժամը 6:30ին, Կլէմէնտի Ալէքս թորոնի նախարարին մէջ տեղի ունեցաւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեղական վարչութեան ընդունելութիւնը, որ նուիրուած էր այս տարուան թեւեթոնի խորհրդապատկերի բացումին:

Լոս Անճելոսի եւ շրջակայքի Հայ գաղութի կազմակերպութեանց, մամուլի եւ խումբ մը բարերարներու առջեւ ելոյթ ունեցաւ Արեւմտեան Ամերիկայի Հայաստան Համահայկական Հիմնադրամի Գործադիր Մարմնի ատենապետուհի Տիկին Մարիա Մեհրանեան: Իր գեկոյցէն յայտնի եղաւ որ հիմնադրամը ցարդ հանգանակած է աւելի քան հարիւր միլիոն տոլար, որ գլխաւորաբար յատկացուած է Լեռնային Ղարաբաղի կենսական կարիքներուն (ճանապարհաշինութիւն, ջրմուղներ, դպրոցներու եւ հիւանդանոցներու վերանորոգութիւն եւ ընկերային ու սնտեսական ծրագիրներու օժանդակութիւն):

Այս տարուան Նոյեմբերին տեղի ունենալիք հեռուստամարաթոնին (թեւեթոն) հասոյթը առաւելաբար պիտի յատկացուի Ղարաբաղի Հատուկ շրջանի հիւանդանոցի հիմնական վերանորոգութեան, նոր դպրոցներու բացումին, ըմպելի ջուրի եւ ուռուցման ջուրերու հայթայթութեան եւ գիւղատնտեսական ծրագիրներու իրականացումին:

Տիկին Մարիա Մեհրանեան յոյս յայտնեց որ Հայաստանի անկախութեան 15րդ տարեդարձին գուզադիպող այս տարուան թեւեթոնը՝ մեծ յաջողութեամբ կը պատկուի, որուն համար խնդրեց գործնական նեցուկն ու աջակցութիւնը տեղական կազմակերպութիւններուն:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ գունաւոր տեսանկյունը, որուն մէջ կը պատկերացուէր հիմնադրամի միջոցներով Հայաստանի եւ Արցախի տարբեր բնագաւառներու մէջ կատարուած իրագործումները:

Այնուհետեւ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի նախագահութեամբ եւ ներկայ եկեղեցական դասի մասնակցութեամբ տեղի ունեցաւ կարճ արարողութիւն մը, որմէ ետք բացումը կատարուեցաւ թեւեթոնի այս տարուան խորհրդապատկերին («Լօկօ»):

ՆՈՐԱՎԱՆՔԸ ԵՈՒՆԵՍԿՕԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԴՈՒՐՍ

Ե Ր Ե Ի Ա Ն , «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»։ ՀՀ իշխանութիւնները վերջերս դիմել են ԵՈՒՆԵՍԿՕ-ին, որպէսզի վերջինս համաշխարհային մշակութային ժառանգութեան ցանկում ընդգրկի նաեւ հայկական ճարտարապետութեան կոթողներից մէկը՝ Նորավանքը, որը գտնուում է Եղեգնաձոր քաղաքի մօտակայքում:



ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգութեան ցանկի հիմքը դրուել է 1972 թուականին, երբ այդ կազմակերպութիւնը ընդունել է համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգութեան ցանկում ընդգրկելու համար եւ այդ իսկ պատճառով պէտք է համարուեն ամբողջ մարդկութեան համաշխարհային ժառանգութեան մի մաս: Կոմպենցիայի մասնակիցներն ընդունում են, որ համաշխարհային ժառանգութեան պահպանութիւնը միջազգային հանրութեան պարտաւորութիւնն է: Եւ ահա, մեր տեղեկութիւններով, վերջերս ԵՈՒՆԵՍԿՕ-ի փորձագէտները ուսումնասիրել են Նորավանքի հարցը եւ հրաժարուել այն մտցնել վերջնական ցանկի մէջ: Պատճառն այն է, որ այն ոչ բոլորովին է համապատասխանում ներկայացուած պայմաններին, քանի որ պայմաններից մէկն էլ այն է, որ այդ ցուցակի մէջ մտնող բոլոր յուշարձանները պէտք է լինեն իրենց սոցիալական տեսքով: Այսինքն՝ այնպէս, ինչպէս կառուցուել են հենց սկզբից՝ ենթարկուած չլինելով որեւէ փոփոխութեան: Նորավանքի դէպքում պարզեմը այն է,

որ հենց նրա հարեւանութեամբ ռեստորան եւ հիւրանոցային համալիր է կառուցուել, եւ այսպիսի համադրութեամբ Նորավանքը երբեք չի կարող յայտնուել համաշխարհային մշակութային ժառանգութեան ցուցակում: Հայաստանում ԵՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային յանձնաժողովում յոյս ունեն, որ հարցը փակուած չէ, քանի որ կարծուում են, որ այդ ռեստորանը քանդուել է: Այդ մասին պէտք է բանակցութիւններ վարեն ռեստորանի տիրոջ հետ: Ի դէպ, մեր տեղեկութիւններով՝ համալիրի իրական տէրը Հայ առաքելական եկեղեցու Սիւնիքի թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանն է:

Նշենք նաեւ, որ այսօրուայ դրութեամբ համաշխարհային ժառանգութեան ցուցակը միաւորում է շուրջ 700 բնական եւ մշակութային օբեկտներ՝ Հնդկաստանի Թաջ-Մահալից մինչեւ Մալիի հնագոյն Թիմբուկտու քաղաքը: Հայկական ներկայութեանը, դրանում ընդգրկուած են նաեւ Գառնին, Գեղարդը, Հաղպատը, Սանահինը, Էջմիածնի Մայր տաճարը եւ Զուարթնոցի աւերակները:

ԹՈՒՐԵՐԻՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՇՏՊԱՆՔԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հայաստան-Սփիւռք երրորդ համաժողովի պատուիրակների մէջ է թուրքիայի «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Դինքը: Սեպտեմբերի 19-ին նա «Հայելի» ակումբի հիւրն էր: Լրագրողների հետ հանդիպմանը օրուայ բանախօսը նախ դէմ էր թուրքիային ներկայացնել որպէս թշնամի երկիր, դրա փոխարէն նա առաջարկեց օգտագործել «հարեւան երկիր» տերմինը: Որից յետոյ աւելացրեց, որ նոյն հարեւան երկրում իրեն վեց ամսուայ պայմանական պատժ են ենթարկել «թրքութիւնը անարգելու պատճառով»: Մինչդեռ սփիւռքահայ մտաւորականը բարձրաձայնել է իրականութեան մասին՝ իսօքը 1915թ ցեղասպանութեան մասին է: Սակայն Հրանդ Դինքը պատրաստ է իր իրաւունքը պաշտպանել մինչեւ Եւրադատարան: Հակառակ պարագայում նա պատրաստ է հեռանալ թուրքիայից: Նա ասում է, որ վերջին տարիներին թուրքերի կողմից ցեղասպանութեան հարցի նկատմամբ հետաքրքրութիւնը գնալով մեծանում է, եւ նրանք վարում են հակառակ քաղաքականութիւնը. դրանցից մէկը դպրոցական դասագրքերում պատմութիւնը խեղաթիւրուած ներկայացնել է՝ իբր հայերն են կոտորել թուրքերին: Միեւնոյն ժամանակ, Հրանդ Դինքը աւելացնում է, որ թուրքիայում մեծամասնութիւնը չգիտի իրա-



Թուրքիայի մէջ լոյս տեսնող «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Դինք

կանութիւնը. «ինչպէ՞ս իմանան, որ 90 տարի արգելուել է իստեւլ այդ մասին», ինչի համար հայկական կողմին նա առաջարկում է վարել թուրքերին իրական պատմութիւնը սովորեցնելու եւ նոր պահանջել ցեղասպանութիւնը ճանաչելու դիւանագիտութիւնը: Թուրքերի մէջ կան մարդիկ, ովքեր ընդունում են իրենց հայրենակիցների կողմից կատարուած ոճրագործութիւնը, մի մասն էլ հարցնում է՝ եղե՞լ է դա, թէ՞ ոչ: Ըստ Հրանդ Դինքի, «արտաքին ճնշումների հետեւանքով կարող է թուրքիան ընդունի ցեղասպանութիւնը», բայց այս կերպ հարցի լուծումը, մեր բանախօսի կարծիքով, «ճանապարհ չէ»:

ՎԱՅԱՍԱՆ-ՍՓԻՒՔ ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Շաբաւակուած էջ 1-էն

հնչին մի տոկոսն է, եւ կարծում եմ, որ իւրաքանչիւր տարի մենք կարող ենք այս ծրագրին առնուազն 25 նոր գիւղ աւելացնել»:

Օսկանեանի խօսքերով, ծրագրին կը մասնակցին ինչպէս մեծահարուստներ՝ մեծ ներդրումներով, այնպէս էլ համեստ ապրող մարդիկ. «Մենք ուզում ենք այս ծրագիրը դառնայ մասսայական, համահայկական ծրագիր: Հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր հայ անհատին՝ իր մասնակցութիւնը բերելու»:

Գիւղական համայնքներու աղքատութեան վերացման հարցին իր ելոյթին մէջ անդրադարձաւ նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը՝ ողջունելով այդ նախաձեռնութիւնը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջինն որոշ դժգոհութիւններ յայտնեց Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու շուրջ: «Չպէտք է հարցեր քննարկուին Սփիւռքի մասնակցութեամբ, իսկ գործողութիւնները տեղի ունենան պետութիւն-Սփիւռք բաժանումով», ըսաւ Արամ Ա. ու աւելցուց, «ՀՀ-Սփիւռք գործակցութիւնը լոկ նիւթական չափանիշներու պէտք չէ բաժանել: Հայաստանը որքան վստահութիւն ներշնչէ Սփիւռքին, այնքան Սփիւռքը աջակից պէտք է դառնայ Հայաստանին»:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով ելոյթ ունեցաւ Կեղրոնանան Վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան: Ան իր խօսքը սկսաւ անդրադառնալով Հայաստանի Անկախութեան 15-ամեակին ու այդ թուականի կարեւորութեան: Ընկ. Աճէմեան գնահատելով գիւղական շրջաններու հարցը լուրջ ուշադրութեան արժանացնելու պարագան, այս առթիւ ըսաւ, «Սփիւռքի կողմէ ներդրու-

մային ծրագիրներուն խոչընդոտող ազդակ կը հանդիսանայ կաշառակերութիւնը, որու մասին կը խօսին բոլորը՝ ժողովուրդը, ընդդիմութիւն եւ իշխանութիւնը: Սակայն, գայն վերացնելու ուղղութեամբ ցարդ առնուած քայլերը կը մնան անբաւարար»:

Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչը անդրադարձաւ նաեւ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան հարցին: «Օգտագործելով այս առիթը կ'ուզենք նաեւ փոխանցել սփիւռքահայութեան մտահոգութիւնները, կապուած Հայաստանի մէջ ժողովրդավարութեան գործընթացի հետ: Հնչակեան Կուսակցութիւնը կը հաւատայ, որ մեզ նման փոքր ժողովուրդներու գոյատեւման ու զարգացման գլխաւոր երաշխիքը, նոյնինքն ժողովուրդն է: Լայն խաւերու գործօն մասնակցութիւնը սեփական ճակատագրի կերտման մէջ. իր առաջնորդներու հանդէպ ունեցած հաւատքի ու վստահութեան մէջ: Մենք կ'ափսոսանք, որ անկախութեան հանրաքուէէն, մինչեւ սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէն, ժողովուրդի գործօնը նահանջի ճամբուն վրայ»:

«Այս առումով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու ազատ ու արդար պայմաններու տակ կայացումը կը նկատենք խիստ հրամայական: Միջազգային դիտորդներու կողմէ տրուելիք գնահատականները պէտք է արդարացնեն մեր բոլորի սպասելիքները», շեշտեց Ընկ. Աճէմեան:

Բացման նիստին յաջորդեց ընդմիջում, որու ընթացքին մասնակիցները՝ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներու առաջնորդութեամբ, այցելեցին Հայոց Ցեղասպանութեան գոհեբու Միժեռակաբերդի յուշահամալիր:

ՐԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԱՍԵՆԱՅՆ ՐԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԽՕՍՔԸ «ՐԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ» ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

«Մեծարգոյ Նախագահ,
Սիրելի վեհափառ եղբայր,
Խորհրդաժողովի սիրելի մասնակիցներ,
Հայաստանում եւ Արցախում մեր պետականութեան վերահաստատման 15-րդ տարեդարձի յոբելեանական լոյսի ներքոյ «Հայաստան-Սփիւռք» երրորդ խորհրդաժողովի գումարումը ուրախութեամբ է համակել մեր հոգիները: Եւ Մենք առ Աստուած գոհութեան եւ փառաբանութեան աղօթքով եկել ենք ողջունելու պատուարժան մասնակիցներին եւ բերելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնութիւնը խորհրդաժողովի աշխատանքներին:

Մայր Հայրենիքը կրկին միաւորել է իր գաւակներին նոյն յոյսերով ու ձգտումներով ու նաեւ՝ հաւատով, որ մենք միասնաբար նոր առաջընթաց ճանապարհ պիտի անցնենք՝ դէպի մեր ժողովրդի բարօրութիւն, հոգեւոր ու ազգային կեանքի զօրացում:

Համայն մեր ժողովրդինը եղան անցնող տասնհինգ տարիների եւ՝ դժուարութիւնները, եւ՝ յաղթանակները: Հայրենաբնակ եւ սփիւռքահայ համայն մեր ժողովուրդն ապրեց Հայրենիքի անկախութեան բերկրանքը եւ հաւասարագոր դիմակայեց մեր ազատութեանը սպառնացող վտանգները, հաւասարագոր կրեց անկախութեան ճանապարհի, պետականութեան կայացման դժուարութիւնները ու միասնաբար ձեռք բերեց յաղթանակներն ու յաջողութիւնները: Փառք տանք Աստծուն, որ օրհնեց հայրենի անկախ պետականութիւնը վերահաստատելու մեր ժողովրդի միաբան ջանքերը, սէրն ու նուիրումը:

Ամէն ժամանակ ունի իր հրամայականը: Այսօր մեր պատմութեան կարեւոր հանգրուան ենք ապրում: Եկել է պահ, որ ներկայ մեր հնարաւորութիւնները, որ աւելին են՝ Հայրենիքի ազատ, անկախ կեանքով, Սփիւռքի հետ անարգելք յարաբերութիւններով, լիովին եւ լաւագոյնս ծառայեն մեր ժողովրդի բարօրութեանը, միասնութեանն ու համախմբութեանը, ամենուր հոգեւոր ու ազգային կեանքի գարթօնքին: Այս հեռանկարն է այսօր ներշնչում եւ առաջնորդում մեզ: Այս գերագոյն նպատակին հետամուտ եւ առկայ հրամայականներին ընդառաջ ելնելու է կոչուած մեր հաւաքը: Այո, աւելին են այսօր ազատօրէն գործելու հնարաւորութիւնները, քան 15 տարիներ առաջ, սակայն քիչ չեն եւ մեզ յուզող, հրատապ հարցերը: Եկել է պահ, որ չպիտի ուշանանք: Արդի աշխարհում՝ քաղաքական ընթացքներում, գիտութեան ու տեխնիկայի, հաղորդակցութեան արագ զարգացումներում, տնտեսական ու մշակութային ժամ առ ժամ սերտացող առնչութիւններում հայ ժողովուրդը պիտի հանդէս գա եւ խաղաղ ու ստեղծագործ կեանքի իր յոյսերը իրականութիւն պիտի դարձնի ամուր պետութեամբ ու կենսունակ Սփիւռքով: Ներկայիս, երբ մեծ տեղաշարժեր են ընթանում Սփիւռքի համայնքներում, նուազում են որոշ գաղթօջախներ, ձեւաւորում նորերը, հրատապ է դառնում ընթացող տեղաշարժերին համարժէք ազգապահպան նոր կառույցների ստեղծումը, նոր եկեղեցիների, դպրոցների կառուցումը, կրթութեան լիարժէք կազմակերպումը, հրատապ է նաեւ մեզ ժառանգութիւն մնացած եկեղեցական կեանքը յուզող անբնական վիճակների յաղթահարումը:

Այսօր Հայաստանի եւ Արցախի հզօրացման, ըստ ամենայնի գինուած ու մարտունակ բանակով պաշտպանուածութեան եւ ամէն առումով առաջընթացի հրամայականն է բոլորիս առջեւ: Դեռ ճանաչուած չէ Արցախի արդար իրաւունքը, եւ շարունակում է մեր ժողովրդի դէմ պատերազմի վերսկսման սպառնալիքը: Հայրենիքում դրական տեղաշարժեր կան տնտեսական, ընկերային կեանքում, կրթութեան, մշակոյթի ասպարէզներում, սակայն դեռեւս յաղթահարուած չեն աղքատութիւնը, գործազրկութիւնը, արտագնայ աշխատանքը երկրից: Կարիքաւոր վիճակում են գիւղական բնակավայրերը, որոնց զարգացման ծրագրերն ու հեռանկարները մեր այս հաւաքի հիմնական նպատակն են: Մենք ողջունում ենք գիւղերը բարեկարգելու ծրագրի նախաձեռնումը, որը այսօր առանցքային նշանակութիւն ունի մեր երկրի տնտեսական ու ընկերային կեանքի առաջընթացի ու ժողովրդի բարեկեցութեան համար: Բոլոր հրամայականներին ձիշդ վճիռներ ու պատասխաններ պիտի գտնենք միասնաբար, միաբան ոգով, ազգային ու եկեղեցական կառույցների միասնական ջանքերով՝ ունենալով մեր անկախ պետականութեան ուժը: Լիբանանեան վերջին իրաւարձութիւնների ժամանակ դրսեւորուեց էականութիւնը հայրենի պետութեան դիրքերից ցուցաբերուած գորակցութեան: Յանկացած իրավիճակում որպէսզի առաւել լինի մեր պետութեան դերակատարութիւնը, մօտ պիտի տեսնենք մեր Հայրենիքը զարգացած ու բարգաւաճող երկիր դարձնելու հեռանկարը, որը ինքնին անկախ պետականութիւն ունենալու նպատակն է՝ ազատութեան մէջ ստեղծելու ու ստեղծագործելու, կառուցելու բարօր ու ապահով կեանք, ազատօրէն արտայայտելու հոգեւոր կենսական ուժերը: Հայրենիքի հզօրութիւնն ու առաջընթացը ուժն ու զօրութիւնն են նաեւ Սփիւռքի: Դարեր շարունակ, թէկուզ բարւօք պայմաններում, թէկուզ՝ դժուարին, Սփիւռքը, եթէ ապրել է ու պահպանուել, ապա՝ իր Հայրենիքը ազատ տեսնելու – Հայրենիք վերադառնալու երազով: Այսօր երազը իրական է մեր Հայրենիքի այս հատուածի վրայ եւ Հայաստանի ու Արցախի ազատ կեանքի հանդէպ հաւատը իրական է, որը պիտի դառնայ մեզ առաջնորդող լոյսը:

Հայրապետական Մեր պատգամն ու յորդորն ենք բերում հայրենաբնակ եւ սփիւռքի համայն մեր ժողովրդին՝ արձագանքելու գիւղերը վերականգնելու հայրենաչէն այս մեծ ու կարեւոր նախաձեռնութեանը: Հայ Առաքելական Եկեղեցին եւս յանձնառու իր մասնակցութիւնն է բերելու ծրագրի իրականացմանը, որը պիտի ծառայի մեր երկրի բարգաւաճմանն ու բարօրութեանը: Հաւատում ենք, որ մեր գաւակները, ինչպէս միշտ, նեցուկ պիտի լինեն Հայրենիքին եւ մեր ժողովուրդը միասնաբար պիտի շէնացնի իր հայրենի տունը, որպէսզի այն միշտ լինի իր յոյսի հանգրուանը, ներշնչանքն ու առանցքը հայ կեանքի, համախմբող գորութիւնը հայութեան: Աշխատանքով հպարտ մեր ժողովուրդը հայրենի հողի վրայ պիտի մոռանայ խեղճութեան մասին: Մեր գաւակներին պիտի յանձնենք ներդաշնակ

Ս.Դ.ՐԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՍԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՍԵՂՈՒԿ ԱՃԵՄԵԱՆԻ ԵՆՈՅԹԸ ՐԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ ՐԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Վեհափառ Հայրապետներ եւ հոգեւոր Հայրեր,
Յարգելի դեկավարութիւն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան,
Հայրենակիցներ.

Հայաստան-Սփիւռք այս երրորդ համաժողովը կը կայանայ Հայաստանի անկախութեան 15 ամեակի նախօրեակին: Անկախութիւն՝ որ այնքան մեծ ոգեւորութեամբ դիմաւորուեցաւ հայ ժողովուրդի աշխարհափիւռ գաւակներուն կողմէ, յատկապէս երբ անկախութեան գուգորդուեցաւ Արցախի ժողովուրդի ազգային ինքնորոշման պայքարը, որ պսակուեցաւ յաջողութեամբ՝ պատերազմի դաշտին վրայ հայ ազատամարտիկներու տարած յաղթանակով:

Այս բարեբաստիկ առիթով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով կը յայտնենք մեր շնորհաւորութիւնները Հայաստանի պետական եւ ժողովրդային բոլոր շրջանակներուն եւ հայ ժողովուրդի աշխարհափիւռ գաւակներուն:

Վեց դարերու վրայ երկարող երազ մըն էր որ կ'իրականանար 1991 թուականի Սեպտեմբեր 21-ին: Երազ՝ որու համար իրենց կեանքը գոհեցին բիւրաւոր հայեր ու անոնց շարքին Հնչակեան 20 տիտաններ, որոնք 1915 թուականին Պոլսոյ մէջ կախաղան բարձրանալու պահուն յայտարարեցին՝ «Վաղը արեւելքի հորիզոնին դուք պիտի ողջունէք Հայաստանի անկախութիւնը»:

Մեր ժողովուրդի սպասելիքները շատ մեծ էին, կապուած անկախութեան ձեռքբերման հետ: Ան կ'ակնկալէր անկախութեան շնորհիւ ունենալ կեանքի աւելի լաւ ու բարեկեցիկ պայմաններ, տնտեսական, քաղաքական, ընկերային ու այլ բնագաւառներու մէջ:

Սփիւռքահայութիւնը իր կարգին մեծ նուիրուածութեամբ փարեցաւ իր նորանկախ հայրենիքին ու փորձեց իր կարելիութեան սահմաններու մէջ օգտակար հանդիսանալ իր երկրին:

Այս տարիներու ընթացքին Հայաստանն ու Սփիւռքը իրար աւելի մօտեցնելու գծով տարուող բազմաթիւ աշխատանքներու ծիրէն ներս Հայաստանի պետութիւնը առաւ երկու կարեւոր նախաձեռնութիւններ. Հայաստան Համահայկական Հիմնադրամը եւ Հայաստան-Սփիւռք Համաժողովները: Առաջինը մասնակիօրէն իրականացուց իր վրայ դրուած յոյսերը, սակայն տակաւին երկար ճամբայ ունի կտրելիք: Երկրորդը՝ Հայաստան-Սփիւռք Համաժողովը, որու երրորդ գումարումն է այս:

Թէեւ մեծ խտտումներով ճամբայելած Հայաստան-Սփիւռք Համաժողովը, մինչեւ օրս չկարողացաւ իրականացնել առաջին համաժողովին ներկայացուած առաջարկներու մեծ մասը: Իսկ եթէ եղան, որոշ իրագործումներ, անոնց մասին անտեղեակ կը մնայ մեր ժողովուրդի լայն հասարակութիւնը:

Այս ուղղութեամբ նպատակայարմար կը գտնենք Հայաստան-Սփիւռք Համաժողովին ծնունդ առած մարմինի մը կազմութիւնը, որպէսզի կարելի ըլլայ իրականութիւն դարձնել հոս քննարկուող խնդիրները: Սփիւռքը ունի քաղաքական, տնտեսական, բարեսիրական եւ այլ տեսակի փորձառու միաւորներ, որոնք կրնան եւ պատրաստ են նպաստելու այդ նպատակին:

Օգտագործելով այս առիթը կ'ուզենք նաեւ փոխանցել սփիւռքահայութեան մտահոգութիւնները, կապուած Հայաստանի մէջ ժողովրդավարութեան գործընթացի հետ: Հնչակեան Կուսակցութիւնը կը հաւատայ, որ մեզ նման փոքր ժողովուրդներու գոյատեւման ու զարգացման գլխաւոր երաշխիքը, նոյնինքն ժողովուրդն է: Լայն խաւերու գործօն մասնակցութիւնը սեփական ճակատագրի կերտման մէջ. իր առաջնորդներու հանդէպ ունեցած հաւատքի ու վստահութեան մէջ: Մենք կ'ափսոսանք, որ անկախութեան հանրաքուէէն, մինչեւ սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէն, ժողովուրդի գործօնը նահանջի ճամբուն վրայ է:

Այս առումով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու ազատ ու արդար պայմաններու տակ կայացումը կը նկատենք խիստ հրամայական: Միջազգային դիտորդներու կողմէ տրուելիք գնահատականները պէտք է արդարացնեն մեր բոլորի սպասելիքները:

Գալով Հայաստան-Սփիւռք այս համաժողովի գլխաւոր օրակարգին՝ սահմանային գիւղերու իրավիճակին, գնահատելի կը գտնենք այդ հարցը լուրջ ուշադրութեան արժանացնելու պարագան: Այս եւ նման ծրագրերն պիտի նպաստեն հայրենաբնակ ժողովուրդի դիմագրաւած դժուարութիւններու մեղմացման եւ արտագաղթի կասեցման՝ տնտեսական ու ընկերային պայմաններու բարելաւումով:

Հոս պէտք է աւելցնել, որ սփիւռքի կողմէ ներդրումային ծրագրերներուն խոշորագոյն ազդակ կը հանդիսանայ կաշառակերութիւնը, որու մասին կը խօսին բոլորը՝ ժողովուրդ, ընդդիմութիւն եւ իշխանութիւնը: Սակայն, զայն վերացնելու ուղղութեամբ ցարդ առնուած քայլերը կը մնան անբաւարար:

Աւարտելու համար, թոյլ տուէք յանուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ողջունելու Հայաստան-Սփիւռք երրորդ Համաժողովը ու վերահաստատելու մեր գորակցութիւնը Հայաստանի եւ Արցախի մեր ժողովուրդին, նաեւ պատրաստակամութիւնը գործակցութեան՝ բոլոր մակարդակներու վրայ, ամրապնդելու համար Հայաստան-Սփիւռք կապերը ու հզօրացնելու մեր անկախ պետականութիւնը:

հասարակական կեանքով ամուր, մեր հաւատի լոյսով, գիտութեամբ ու մշակոյթով պայծառ երկիր, քրիստոնեայ երկիր՝ աստուածասէր ու մարդասէր: Եւ թող մեզ առաջնորդ լինի Աստծոյ ձշմարտութեան Հոգին, եւ մեզ օգնական՝ Աստծոյ շնորհն ու զօրութիւնը, որպէսզի մեր ծրագրերն ու գործերը բարի արդիւնքներ բերեն ու յաղթանակներ, եւ մենք սերնդից սերունդ պատմենք Աստծոյ օրհնութիւնը մեր ժողովրդի կեանքի մէջ:

Օրհնեալ երթ խորհրդաժողովի աշխատանքներին եւ բարի նախաձեռնումներին»:

ԱԶԳԱՅԻՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ՝ 15 ՏԱՐԵԱԿՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Մարդկային կեանքի ընթացքին, 15 տարիքը բաւականին նշանակալից տարիք մը կը սեպուի, քանի որ պատանեկութենէն դէպի երիտասարդութիւն փոխանցումը մըն է ան: Պատանեկութեան պատճառած տարբեր-տարբեր տեսակի դժուարութիւնները մասամբ մը չքացած կ'ըլլան եւ պատանին, բաւականին ինքնավստահ կերպով կը դիմաւորէ երիտասարդութեան բերած մարտահրաւէրները: Հիմնական հարցը այն է թէ փոխանցման այս շրջանին, անհատը որքա՞ն նախապատրաստուած կ'ըլլայ այդ մարտահրաւէրները դիմազարաւելու եւ անոնցմէ յաղթական դուրս գալու:

Կարելի է գուզահեռ մը գծել անհատական կեանքի եւ նորանկախ երկիրներու միջեւ, հաստատելու համար այն իրողութիւնը թէ, ինչպէս կեանքի պարագային, երկիրներու կեանքն ալ կը հետեւի նոյն օրինաչափութիւններու: Հիմնականը սակայն, երկու պարագաներուն ալ, այն է թէ ի՞նչ ամուր հիմներու վրայ կը դրուին կառուցները, եւ թէ որքան անոնք կը դիմանան, կարճ ժամանակի ընթացքին, գիրենք դիմաւորող դժուարութիւններուն:

Ընդհանուր այս ակնարկներէն ետք կ'արժէ տեսնել թէ ի՞նչ պատահեցաւ Հայաստանի կեանքէն ներս, անկախութեան ստացումէն ասդին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆ

Ժողովուրդներու անկախութեան կը տիրանան տարբեր-տարբեր պայմաններու տակ: Խօսքը չի վերաբերի այն երկիրներու որոնք դարերու ընթացքին ունեցած են իրենց երկիրներու կամ հայրենիքներու անկախ գոյութիւնը, եւ պէտք չեն ունենար պայքար մղելու անկախութիւն ձեռք ձգելու համար: Խօսքը կը վերաբերի անշուշտ քաղաքական անկախութեան մասին, որ կը ստացուի ուրիշ պետութենէ մը բաժնուելու պարագային, այլ ոչ թէ տուեալ երկրէ մը ներս տեղի ունեցող քաղաքական փոփոխութեանց մասին: Օրինակներ են Ամերիկայի Միացեալ Նահանգներու անկախացումը Անգլիայէն քաղաքական պատերազմի միջոցաւ, եւ կամ ափրիկեան, միջին արեւելեան եւ ասիական շարք մը երկիրներու ազատագրումը գաղութարար պետութենէ մը:

Բացի ազատագրական պայքարէն, որ յաճախ արիւնահեղութեամբ եւ զոհողութեամբ տեղի կ'ունենայ, կայ նաեւ անկախութեան ձեռքբերումը մը, որ բախտի կամ խաղաղ միջոցներով կը պատահի: Ընդունինք որ նախընտրելի է խաղաղ պայմաններով անկախութեան հասնիլը, զոր բախտաւորութիւն պէտք է սեպել: Ընդհանրապէս սակայն ընդունուած ձեւը անկախութեան, պայքարի միջոցաւ է: Եթէ առնենք հայ ժողովուրդի պարագան, վարժուած ենք ըսելու որ վեց հարիւր տարուայ գերութիւն մըն է որ ապրած է հայ ժողովուրդը, 1375ի իր պետականութեան կործանումէն ասդին: Օսմանեան-Սուլթանական տիրապետութեան տակ երկար դարեր ապրելէ ետք, 19րդ դարու կէսերէն ասդին, հայ ժողովուրդը գործնա-

կանապէս հետապնդած է անկախութեան գործընթացը, նախ պահանջելով ինքնավարութեան իրաւունք, որ մերժուելէ ետք, ստիպողաբար դիմած է ազատագրական պայքարի: Հայ ժողովուրդի մղած ազատագրական պայքարը, որուն մանրամասնութիւնները զանց կ'ընենք այս յօդուածի սահմաններէն ներս, ի վերջոյ կը յանգի 1918ի Մայիս 28ի առաջին անկախութեան, գոյովիճակ որ 1920ական թուականներէն մինչեւ 1991 Սեպտեմբեր 21, կը նկատուի Խորհրդայնացի մարտնչու միջոցով, ի վերջոյ հասնելու համար այսօրուայ անկախութեան որ 15 տարեկան է այս տարի:

Հակառակ այն իրողութեան որ այսօրուայ անկախութիւնը արդիւնք էր Խորհրդային կարգի փլուզումին, այլ ոչ թէ ուղղակի ազգային ազատագրական պայքարի, եւ սակայն նկատի առած հայ ժողովուրդի մարտնչու միջոցով 19րդ եւ 20րդ դարերու ընթացքին, չենք կրնար ըսել որ բոլորովին դիւրութեամբ է որ ձեռք բերուեցաւ այդ անկախութիւնը: Հայ ժողովուրդը արիւն թափեց եւ զոհեր տուաւ իր առաջին անկախութեան համար, եւ բարեբախտութիւն պէտք է սեպել այն իրողութիւնը որ իրմէ անկախ պատճառներով պատմութենէն վերացաւ Խորհրդային Միութիւն ճանջուած քաղաքական միաւորը, եւ անկախութիւն ստացան ոչ միայն Հայաստանը, այլ 13 ուրիշ միաւորներ որոնք մաս կը կազմէին այդ Միութեան: Գոնէ այս վերջին անկախութեան համար արիւն թափելու պէտք չեղաւ, եթէ նկատի չառնենք Խորհրդային 70 տարիներու ընթացքին տեղի ունեցած աքսորներն ու հալածանքները: Հիմնականը անկախութեան տիրացումն է:

ԻՆՉ ՊԱՏԱՐԵՑԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ՆԵՐՍ

Կարենալ հասկնալու համար թէ ի՞նչ պատահեցաւ Հայաստանէն ներս անկախութեան ստացումէն ասդին, պէտք է աչքէ անցընել այն դրութիւնը որ կը տիրէր Խորհրդային Միութեան սահմաններէն ներս: Քաղաքական գետնի վրայ, հաստատուած էր միակուսակցական, ամբողջատիրական դրութիւն մը, որ ամէն ձեւով կը կաշկանդէր խօսքի, խղճի եւ մարդկային իրաւունքներու ազատութիւնը, այլախոհներուն պատճառելով ծանր պատիժներ: Տնտեսական մարզէն ներս, նոյնպէս հաստատուած էր կեդրոնական դրութիւն մը, պետութեան անմիջական եւ բացարձակ հսկողութեան տակ, եւ որպէսզի կարելի ըլլար կայսրութիւնը պահել, Միութիւնը կազմող 14 հանրապետութիւնները կ'ենթարկուէին տնտեսական իւրաքանչիւր կարգադրութեանց: Խորհրդային Միութեան փլուզումին իբրեւ արդիւնք, իւրաքանչիւր հանրապետութիւն, ներառեալ Հայաստանը, ինքզինք գտաւ բոլորովին նոր կացութեան մը առջեւ, թէ քաղաքական եւ թէ մանաւանդ տնտեսական: Միակուսակցական ղեկավարութենէն, անկախացած հանրապետութիւնները իւրաքանչիւր որդեգրեց քաղաքական դրութիւն, որ ձեւով եթէ հանրապետութիւն կոչուեցաւ, խորքին մէջ սակայն իշխանութիւնը ձեռք առնող տարրերը շարունակեցին հետեւիլ այն վարքագծին որուն վարժուած էին երկրի ամբողջա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաւատարիմ մնալով «Հայաստանի Անկախութեան մասին» հռչակագրի, յենուելով մարդու իրաւունքների եւ ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրայ, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրաւական հասարակարգ, հիմք ունենալով 1991 թուականի Սեպտեմբերի 21ին՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացուած հանրաքուէի արդիւնքները, Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը հռչակում է.

Հայաստանի Հանրապետութիւնը անկախ պետութիւն
Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի Նախագահ՝
Լեւոն Տէր Պետրոսեան
Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի քարտուղար՝
Արա Սահակեան
23 Սեպտեմբերի 1991 թուական,
քաղ. երեւան

«Այս սրբազան միւռնով միացեք, եղբայրացեք, եղէք մէկ կամք, մէկ ուրախութիւն, մէկ ազգ, մէկ ընտանիք, եղէք միախորհուրդ՝ վասն անկախութեան Հայաստան աշխարհի:
Կեցցէ Հայոց Ազգը եւ հայոց անկախ պետականութիւնը»:
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Հանրաքուէին մասնակցելու իրաւունք ունեցողների թիւը՝	2.163967
Մասնակցիցների թիւը՝	2.056758
(քուէարկութեան իրաւունք ունեցողների 95,05 տոկոսը)	
ԱՅՈ քուէարկածների թիւը՝	2.042627
(քուէարկութեան իրաւունք ունեցողների 94,39 տոկոսը եւ քուէարկութեան մասնակցիցների 99,31 տոկոսը)	
ՈՉ քուէարկածների թիւը՝	10.002
(քուէարկութեան մասնակցիցների 0,46 տոկոսը)	

տիրական շրջանին: Ի վերջոյ, մտածելակերպի, «մենթալիթէթ»ի հարց էր, որ տակաւին մինչեւ այսօր կը շարունակուի: Եթէ նոյնիսկ ձեռնարկ կերպով գոյութիւն ունին գործադիր, օրէնսդիր, եւ դատական իշխանութիւններ, երեքն ալ կը ղեկավարուին ամբողջական ձեւով, կեդրոնացեալ իշխանութեան մը կողմէ, առանց իւրաքանչիւրը կարենալ հակակշիռ բանեցնելու միւսներուն վրայ: Այս երեւոյթէն կը ծնէր հովանաւորութիւնը, քաղաքական անիշխանութիւնը, ազդեցութեան լայն կամ նեղ գոտիները, կաշառակերութիւնը իբրեւ արդիւնքի հասնելու միջոց, եւ այլն: Նոյնքան եւ թերեւս ալ աւելի տխուր, չըսելու համար ողբերգական դարձաւ երկրէն ներս որդեգրուած տնտեսական նոր դրութիւնը: Նախորդ Խ. Միութեան օրով տնտեսական համակարգը խստօրէն կեդրոնացեալ հանգամանք ունէր, պետական իմաստով: Երեւութեամբ սոցիալիստ-ընկերավարական ձեւի տակ, եւ սակայն չոն եւս տարիներու ընթացքին ստեղծուեցաւ «ընտրանի դասակարգ» մը, «նոմանք-լաթուրա» ճանջուած, որ դարձաւ ժողովուրդի մեծ մասը մնաց ազդեցութեան-բարեկեցութեան միջեւ տեղ մը, որ սակայն շնորհիւ պետութեան ընձեռած դիւրութեանց - կրթութեան, վարձքի եւ սպառողական կեանքի վերաբերող երեւոյթներ, ժողովուրդը գէշ-աղէկ կեցութեան մը հասած էր: «Պետական-ընկերավարական» դրութիւն մը հաստատուած էր, որ, եթէ տեւէր, ժամանակի ընթացքին, կրնար բարելաւուիլ, եւ բարձրացնել կենսամակարդակը: Դժբախտաբար, անկախութեան անակնկալ եւ արագ ձեռքբերումը ուղղակի շփոթի եւ խուճապի մատնեց ժողովուրդը: Անկախութենէն անկախիքները շատ

էն - կեանքի աւելի լաւ պայմաններ, տնտեսական, քաղաքական, ընկերային, կրթական եւ այլ մարզերէն ներս: Քաղաքականէն աւելի ժողովուրդը ինկաւ «ազատ շուկայական փոխ-յարաբերութիւններ» ճանջուած ամենէն կոպիտ, ամենէն անմարդկային եւ արեւմուտքին մէջ «քափիթալիստական» ճանջուած դրութեան մը ճանկերուն մէջ, եւ անոր ընկերացող սեփականաշնորհման ապիկար գործընթացով մը, իշխանութեան գլուխը անցած խեղճ ու կրակ մարդիկ մէկ օրէն միւսը կարողացան մեծ հարստութիւններ դիզել: Ստեղծուեցաւ անջրպետ մը ունեւորներու եւ չունեւորներու միջեւ, կացութիւն որ մինչեւ այսօր կը շարունակուի, մէկ կողմէն ստեղծելով բազմամիլիոնատէր մարդիկ, եւ միւս կողմէ, չունեւոր դասակարգ մը, որ կը տուայտի աղքատութեան տարբեր շերտերու մէջ: Բարեկամ մը վերջերս կ'ըսէր թէ գուեցեւորական դրամատուններու մէջ շատ աւելի ամերիկեան տոլարներ դիզուած են երկրի ղեկավար դասակարգին պատկանող քան թէ Հայաստանի պետական պիւտճէն: «Ազատ շուկայական» այս դրոյթը յառաջացուցած է տազնապ մը տնտեսական-ընկերային մարզէն ներս որմէ տուժողներն են ժողովուրդն ու մտաւորականութիւնը: Այս պայմաններու տակ, մինչ մէկ կողմէ Երեւանը կը «բարեգարգուի» իր շինարարութեամբ, անդին արտագաղթը կը շարունակուի, եւ Երեւանէն հինգ քիլոմետր անդին, երկրի բնակչութիւնը ինկած է աղքատութեան գիրկը, ստեղծելով երկու Հայաստաններ: Փոխանակ հայ անկախ պետականութեան կայացումէն ժողովուրդը օգտուելու, մէջտեղ եկաւ մենաշնորհեալ շահամոլ դասակարգ

ՏԵՍԱԿԵՏ

ՓՈՒՒՆԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

ՄՏԵՐԻՄ ԽՕՍԷՔ՝

ՇԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌԵ ԵՐՐՈՐԴ ԸԱՍԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ

ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Հայաստանի անկախութեան 15րդ տարեդարձին առնթեր, Երեւանի մէջ 18-20 Սեպտեմբեր 2006ին կը կայանայ Հայաստան-Սփիւռք Երրորդ Համաժողովը: Հայրենի կառավարութեան արտաքին գործոց նախարարութիւնը ամբողջ սփիւռքահայութիւնը կը հրաւիրէ այս համաժողովին՝ միասնաբար քննարկելու, վերլուծելու եւ պատշաճ գնահատական տալու համար մեր անցեալին, ապա վեր առնելու մեր պատմութեան եւ աշխարհաքաղաքական ընթացիկ զարգացումներու արձարձած նորագոյն խնդիրները մեր ազգին առջեւ եւ այնուհետեւ որոնելու գանձեր գործակցաբար լուծելու կարելիութիւններն ու հեռանկարները:

Seventeen hours have passed since we left for the peak, and now we're taking leave of our guide and going on home, which for tonight will be Dogbiscuit again. In the crowded van at golden hour, listening to the melancholy chimes of something Googoosh that launches the Iranians into a limb waving frenzy, which spreads to the driver and buries the Poles under a slightly touchy introversion, I can't help but feel a certain clear connection with the people around me and the land under our wheels. Ararat brought us together to share a truly unique experience that each one of us will feel in the muscles of our bodies and the sinews of our souls for days and maybe weeks to come, and for that I'm grateful, grateful to be an Armenian on Ararat.

Armenians Against Open Border With Turkey

Continued from page 1

Successive governments in Ankara have made its reopening conditional on a resolution of the Karabakh conflict. They have also demanded an end to the increasingly successful genocide recognition campaign.

Armenian public opinion seems simi-

larly apprehensive about Turkey, with 80 percent of those polled viewing their Western neighbor as a threat to Armenia's national security. Conversely, 85 percent referred to Russia as a strategic partner of Armenia. It was followed by France (53 percent) and the European Union (36 percent) as a whole. Only 16 percent mentioned the United States.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՇԱՐԺՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

(ՆԱԽԱՏԵՍՆՈՒՄ Է ՎԱՐԴԱՆԱՆՑԸ 2007-ԻՆ ՆԵՃԵ ԸԱՍԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԾՈՒԲՈՎ. ԱՅՂ ԱՆՈՒԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԶՕԴՈՒԱԾԱՋԱՐԻ Ա. ՄԱՍՆ Է ՍՈՅՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ)

ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ
(Շարունակաբան և խմբագիր էին)

ՏԻԶԲՈՆՈՒՄ ՄԵԾ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

Թէեւ հրաւիրուած նախարարները եկան իրենց գտնուած տարբեր վայրերից՝ Հայաստանից, Պարսկաստանից եւ կայսրութեան ծայրամասերից, բայց բոլորն էլ շարժուեցին Արարատի Մեծ Եպիսկոպոս Յովսէփի օրհնութեամբ եւ միասնականութեան վճռականութեամբ: Նրանք սրտի խորքում թագնեցնելով ցաւն ու անպատուութիւնը արտաքինապէս իրենց ցոյց են տալիս, գոհ ու երջանիկ: Ինչքան նրանք ուրախ ու գուարթ էին երեւում այնքան աւելի զայրանում ու զարմանում էին չարասէր գրուանականները: Շահին Շահը նրանց կանչել էր առանց նշելու նրանց բարձն ու տիտղոսը: Օրինակ գրուած էր. Միւսնեաց տոհմից՝ Վարդան եւ այլն: Նրանց ցոյց չտրուեց պատշաճ ընդունելութիւն ու պատիւ: Ի պատասխան դրան հայերը, Քրիստոսի մէջ հաստատուած ոչ ձմեռային սառնամանիքից էին մրսում, եւ ոչ էլ սոթից՝ տաքանում, ոչ ահագին ձայնից էին սարսափում եւ ոչ էլ տանջանքների սպառնալիքներից վախենում: Նրանք անտարբերութեամբ վահանուէլ էին բռնութիւններից:

Շահին Շահը պահանջում էր իր կամքի անվերապահ գործադրումը՝ բռնի կրօնափոխութիւնը: Նա պնդում էր. «Ձեզ ամենեւին գիշորութիւն չեմ անի, ամէն տեսակ նեղութիւն ու շարժարանք կը թափանցեմ ձեզ վրայ, մինչեւ որ ակամայ կատարէք իմ կամքն ու հրամանը»: Հայերը դիմում էին տրամաբանական փաստարկների եւ իրական փաստեր էին մատնանշում: Հայերը փաստարկում էին, որ իրենք նախկին ասանեանների օրօք նուիրուած ծառայել են պարսկական գահին ու արժանացել բարձր պարգևների: Իսկ այժմ, երբ ինքը՝ Յագղկերտ Բ.-ն բարձրացրել է հարկերը ու վատթարացրել կեանքի պայմանները, իրենք շարունակում են անբողոք, չլու հնազանդ հպատակուէլ ու կատարել իրենց պարտականութիւնները, վճարել հարկերը: Յագղկերտ պատասխանում է, որ ինքը վնաս է համարում արքունի գանձարան ընդունելու հայերի մուծած հարկերը, որ ինքը վախենում է, որ Զրուանը իրենցից վրէժ առնի հայերի համար: Հայ նախարարները այս անգամ դիմում են աստուածաբանական փաստարկման եւ հաստատում, որ Քրիստոսի եկեղեցին մարդաշէն չէ, գիտնականի գիւտ չէ, իմաստունի հնարանք չէ, այլ իրաւ Մեծ Աստուծոյ շնորհն է տրուած բոլոր մարդկութեան եւ այդ պատճառով էլ այն անհնարին քանդել ու կործանել: Այս խօսքի վրայ Յագղկերտը վճռում է գործի դնել բոլոր իր սպառնալիքները:

Հագղկերտ փարպեցին նկատելով Սասանեանների քաղաքականութեան փոփոխութիւնը, ոչ-գրադաշտական կրօնի հետեւորդներին բռնի կերպով կրօնափոխ դարձնելու քաղաքականութեան որդեգրումը այն բացատրում է պարսիկների նոր մտա-

հոգութեամբ: Յագղկերտ Բ.-ն, ըստ Փարպեցու, գտնում է, որ իրենք սխալ են վարուէլ անցեալում, երբ մտահոգուէլ են հպատակ ազգերի լոկ մարմնական, նիւթական, ռազմական, տնտեսական վիճակով: Այժմ Շահին Շահը մտահոգուած է նաեւ նրանց հոգեւոր փրկութեան հարցերով: Նա պահանջում է հպատակներին ոչ միայն գինուորական, տնտեսական, վարչական այլ նաեւ հոգեւոր ենթարկուածութիւնը, պատկանելութիւնը, որին առարկում են հայերը իրենց դաշնակիցների հետ: Այսպիսով, Սասանեանները փրկութեան քրիստոնէական վարդապետութեան հակադրում են գրուանականը: Եղիշէն եւ Վարդանանց հետնները այս հիման վրայ գտնում էին, որ այս պայքարը, Վարդանանց պատերազմը բնոյթով հոգեւոր է եւ չի սահմանափակոււմ նիւթականի ոլորտով:

Փաստերը վկայում են, որ պարսկական վերնախաւում ու կայսրութեան տարբեր կողմերում քիչ չէին հայերին համակողմները: Նրանց մէջ կային ինչպէս քրիստոնեաներ, այնպէս էլ հակաքրիստոնեաներ: Օրինակ: Երբ Արտաշատի ժողովի որոշումը ընթերցուեց արքունի Մեծ Խոնաստանում, մեծ բանակի առաջ, ներկաներից շատերը, թէեւ վախենում էին Սասանեան իշխանութիւնից, գաղտնաբար գովում էին հայերին ոչ այնքան նրանց ճարտասանական հմտութեան, որքան մտքերի եւ աներկիւղ համարձակութեան համար: Երբ ներկաները լսեցին հայերի մերժողական պատասխանը, վախեցած հպատակներից շատերը սկսեցին զօրանալ ու ամրապնդուէլ: Այս պարագային էլ, ինչպէս տեղեկացնում է Եղիշէ, երբ Յագղկերտ սպառնաց հայ նախարարների նկատմամբ գործադրել իր խոստացած պատիժները, եւ երբ վիճակը անելանելի էր թւում, պարսից պալատի մէջ աշխատող ոչ-հայ քրիստոնեաները որոշեցին հայերին օգնել: Խորհուրդ տուին դիմել խորամանկ հնարքի՝ երեսանց ընդունել գրուանութիւնը բայց հոգով-սրտով պահել քրիստոնէական հաւատը: Կեղծ կրօնափոխութեան լուրը արագ տարածում են, որպէսզի շուտ հասնի այն ումն է եւ աւելի տպաւորիչ լինի:

Հագղկերտ փարպեցի գտնում է, որ հայերը իրենք հասան երեսանց կամ կեղծ խոստմնադրութեան գաղափարին՝ իրադրութիւնը աւելի հանգամանօրէն վերլուծելով եւ աւելի խորաթափանցութեամբ ընթերցելով Աստուածաշունչը:

Նախարարները, ըստ Եղիշէի, այդ հնարանքին դիմեցին համոզուած լինելով, որ Աստուծոյ յայտնի է ամէն մի սրտի գաղտնիք, որ Նա գիտի, որ կեղծ է նրանց կրօնափոխութիւնը, գիտի որ իրենք այդ քայլին դիմում են հագղկերտ հաւատացեալների կեանքը փրկելու, Քրիստոսի եկեղեցին Հայաստանում կործանումից հեռու պահելու եւ չարի նպատակների իրագործումը խափանելու համար: Փարպեցի երեք այլ կէտեր է աւելացնում: Ըստ նրա Մեծ Ատենի առաջ կանգնած հայերը այդ քայլին են դիմում, որպէսզի տուն վերադառնալու հնարաւոր-

րութիւն ունենալով մեծացնել ընտրութեան հաւանականութիւնը. կամ մի կերպ իրենց աշխարհում պահել նախկին վիճակը, կամ կազմակերպել ապստամբութիւնը (որոշ հայեր նախընտրում էին օգտագործել յանուն Քրիստոսի նահատակութիւնը, յաւերժական կեանքի ապահովումը, հոգու փրկութիւնը) եւ կամ ողջ տոհմով Սասանեան տիրապետութեան սահմաններից դաղթելով իրենց նախնեաց հաւատը պահել, քանի որ յիմարութիւն նկատում էին հոգին կորցնել, անձը փրկելու, ֆիզիկական գոյութիւնը փրկելու համար կորցնել հոգին, Քրիստոսին: Վարդան Մամիկոնեան փորձեց իրագործել երկրորդ տարբերակը, սակայն նախարարներն ու հոգեւորականները միացեալ ջանքերով Մարզպան Վասակ Սիւնիի գլխաւորութեամբ նրան վերադարձրին: Միացեալ ճակատով որոշուեց գործադրել ապստամբութեան ծրագիրը:

Այս վարդանանց երկրորդ մեծ յաղթանակն էր, քանի որ այդպիսով պահուեց հայ բանակի եւ հայ երկրի ղեկավարութիւնը, հնարաւոր դարձաւ կազմակերպելու երկրի պաշտպանութիւնն ու հայ կեանքի ու մշակոյթի ինքնատիպութիւնը:

Նախարարների սոյն քայլը ունենում է եռակի արձագանգ.

1. Յագղկերտը համոզուելով ուրախանում է, վերադարձնում է նախարարների պաշտօնական պատիւներն ու տիտղոսները: Նրանց ողորդում է նուէրների մէջ: Նրանց հետ Հայաստան ուղարկում է մի մեծ բանակ, 700 մոզեր, գրուանականութեան ուսուցիչներ եւ մի մոզպետ ու նրանց յանձնարարում իր կամքը գործադրել ամենայն մանրամասնութեամբ: Նրանց առաջադրեց Հայաստանից անցնել Վրաց, Աղղանից, Լիւնից, Աղձնեաց, Կորդուաց եւ Զաւղից աշխարհները նոյն առաքելութիւնը ի գործ դնելու: Իր համար այդ ուրախ լուրը Յագղկերտ յայտնեց բոլոր աշխարհին: Բայց առ ի գգուշութիւն իր մօտ պատանդ պահեց Հայաստանի Մարզպան Վասակ Սիւնիի եւ Վրաց բողոքի Աշուշի որդիները:

2. Տարածաշրջանի միւս քրիստոնեաները հիասթափութիւն ապրեցին, ապակողմորոշուեցին: Երբ նրանք իմացան հայերի «կրօնափոխութեան» մասին աստիկ խոցուեցին ու հանդիմանեցին նախարարներին: Նրանք այդ հայերին ասա-

ցին. «Դուք էիք մեր ապաստանի ամուր պարիսպը: Երբ վտանգ էր սպառնում, ձեզ մօտ էիք ապահովութիւն գտնում: Այժմ այդ մեծ ամրութիւնը հիմնայատակ տապալուեց: Դուք էիք մեր պարձանքը ճշմարտութեան թշնամիների առաջ: Այժմ դուք էք մեր նախատինքը նոյն թշնամիների մօտ: Մինչեւ այժմ ձեր ճշմարիտ հաւատի համար մեզ էլ փոքրի շատէ ինչպէս էին. իսկ այժմ ձեր պատճառով մեզ էլ անողորմ կերպով դատում: Ոչ միայն ձեր անձերի համար էք պատասխան տալու Աստուծոյ ահեղ ատենանի առաջ, այլեւ այն բոլոր բազմաթիւ մարդկանց համար, որոնց նոյնպէս շարժարեւոյ են ձեր պատճառով:»

Հայերը բնական առաջնորդներն էին տարածաշրջանի քրիստոնեայ աշխարհում: Նախ այն պատճառով, որ Հայաստանը շրջանի մեծագոյն ուժեղ եւ հարուստ մարզպանութիւնն էր: Երկրորդ այն պատճառով, որ հայերը առաջինն ազգն էին, որ քրիստոնէութիւնը ընդունեցին որպէս պետական ու ազգային կրօն: Հայ եկեղեցին գործադրելով մեր Տէր Քրիստոս Յիսուսի պատգամը իր հիմնադրութեան առաջին իսկ օրից ծաւալեց աւետարանական աշխատանք ու վճռական դեր խաղաց շրջապատի ժողովուրդներին դարձի բերելու ու նրանց հայրենիքներում քրիստոնէական եկեղեցիներ հիմնելու գործում: Հայ եկեղեցին, այդ պատճառով, բարոյական առումով նուաճեց գերապատուութեան իրաւունք: Հարեւան ժողովուրդները ղեկավարում էին հայ աստուածաբանական գրականութեամբ: Հայ պետականութեան, կաթողիկոսութեան եւ մտաւորականութեան ջանքերով հայերը, տուէալ տարածքում, առաջինը ստեղծեցին իրենց գիրքն ու գրականութիւնը եւ առաջինը թարգմանեցին Աստուածաշունչը: Նրանք իրենց փորձառութիւնը կիրառելով հարեւան ժողովուրդների հետ նպաստեցին, որ վերջիններն էլ ստեղծեն իրենց գրաւոր մշակոյթը եւ թարգմանեն Աստուածաշունչը: Այսպիսով, հայերը նուաճեցին մշակութային առաւելութիւններ ու նախամեծարութիւնը, առնուազն հինգերորդ դարում: Այս պատճառով էլ, հայերը բնականաբար դարձան հակազրուանական եւ հակասասանեան շարժու-

Շար.ը էջ 16

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ԸՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԲՐԵՍԵՆԹԱ)
ԻՆՏԵՆՍԻՎ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 11:00-ից 1:00
 Կլէնտոյլի 26-րդ կայանից

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱՎՏԱՆՆԵՐԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՍՏՂ ՍԸ ՇԻՋԵՑԱԻ (ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ՄԱՆՈՒԱՆ ԱՌԹԻ)

ՀԱՅԿԱՆԱԳՎԱԾԵԱՆ

Շաբաթ Օգոստոս 26:

Այն պահուն երբ Մոնթրեալի մերձ լիճերէն մէկուն ափին Երեւան ուսանած երկու գաւազներուս հետ հայկական խորոված կը ճաշակէինք, Երեւանի հիւանդանոցներէն մէկուն մէջ հոգին կ'աւանդէր հայ մեծագոյն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանը, 87 հասուն տարիքին: Անոր ծնունդը, մանկութիւնը եւ երիտասարդութիւնը ձեռք ձեռքի քալած են Հայաստանի Խորհրդայնացումին հետ: Արդարեւ, վանեցի գաղթականի այս օժտեալ

Սիլվա Կապուտիկեան եղաւ նաեւ հայրենիք-սփիւռք կամուրջի գլխաւոր ճարտարապետներէն մէկը: Տարբերելով Սփիւռք այցելող հայրենի կարգ մը պատգամախօսներէ, անոր խօսքը դիւթիչ եւ ազդեցիկ էր՝ քակելու եւ կակուղցնելու աստիճան՝ հնամեայ, կոշտ կապած հակակրական ու թշնամական կեցուածքներ:

Սիլվա Կապուտիկեանի հետ առաջին հանդիպումս տեղի ունեցաւ 1963ի ամրան, երբ Եթովպիայէն գալով միացայ Պէյրութէն Հայաստան հրաւիրուած ուսուցչական խումբին: Դէպի Մաղկաձոր կա-



Ձախէն աջ՝ Փրոֆ. Գառնիկ Անանեան, Ս. Գառնիկեան, Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան, Նելլի Անանեան (հանգ. վ. Անանեանի դուստրը) Ռուբէն Կոզմոյեան եւ Հրայր Ճերանեան

դուստրին կեանքը Խորհրդային Հայաստանի պատմութեան մէկ երեան է՝ անոր սկիզբէն մինչեւ՝ վերջը: Ս. Կապուտիկեան ներկայ է ձոն, այդ եօթնասուն ամեակի գրեթէ ամբողջ տեւողութեան, որպէս կարմիր փողկապաւոր պիոներ, համայնավար գործիչ, բանաստեղծուհի, ընկերային-քաղաքական առաջնորդ, հրապարակախօս ու խմբագիր, հայկական իրաւունքներու անխոնջ պաշտպան, հետեւողական պայքարող եւ յուշագրող: Բայց մանկուց դաստիարակուած աս կուսակցականը՝ այս «առնական հայուհին», ինչպէս զինք կոչած եմ նախապէս, իր խիզախ եւ արդարամիտ նկարագրով չէր կրնար լուռ մնալ համայնավարութեան սխալ եւ արատաւոր երեւոյթներուն հանդէպ, եւ իր քննադատական ու բողոքի բերանացի եւ գրաւոր խօսքը լսելի դարձուց Երեւանէն մինչեւ Մոսկովա՝ Խորհրդային Պրեժնեւի կամ Կորպաչովի առջեւ, իր կողքին ունենալով, ընդհանրապէս, Սերո Խանգատեանը, Զօրի Բալայեանը եւ Վարդգէս Պետրոսեանը: Վերոյիշեալները, անշուշտ համայնավարներ էին, շքանշանակիր ու բարձրագուս համայնավարներ, որոնք սակայն միջազգայնականին ծառայելու ճամբուն վրայ չմոռցան ազգայինը: Չէին ալ կրնար մոռնալ, քանի որ, անոնք գիտէին թէ այդ գեղեցիկ լօզունգները շատերու համար սուտ ու ժամանակաւոր շպար են ազգայինը ծածկելու, վարագոյրի ետին նույնիսկ ազգայնամոլական նպատակներ հետապնդելու, ինչպէս ազերիները:

տարուած պտուղտին մեզի ընկերակցող հայրենի մտաւորականները կ'առաջնորդէր Սիլվան մարգագետնին վրայ ոտքի կանգնած ու մեզի խօսող բանաստեղծուհին յարգելու համար, կամ կ'նամեծարութեան սիրոյն, ժայռի կտոր մը բերի ու հրամցուցի իրեն իբրեւ նատարան: Խնդաց, ըսելով. «Կ'երեւի հապէշներն ալ մեզ պէս քարապաշտ են: Առաջին այցելութիւնս էր հայրենիք եւ այս քառասունօրեակը մեծապէս հարստացուց ու հասունցուց իմ հայրենասիրութիւնս: Հասունցուց այն իմաստով, որ ցնորքները թօթափելով ինձի մնաց իրապաշտ հայրենասիրութիւնը: Այս մասին ինձի համար օրինակելի տիպար մը հանդիսացաւ Սիլվան: Իր մաքուր եւ ամբողջական հայրենասիրութեան պատուանդանին վրայէն, ներբողի ու նուիրումի արտայայտութիւններու գուգահեռ՝ չէր վարաներ քննադատելու եւ խարանդու թերութիւններն ու սխալները եւ անոնց պատասխանատուները: Այս բոլորի մասին ժամանակակից ապրողի ու գործօն մասնակիցի վկայութիւնները տուած է ան՝ իր կեանքի վերջին շրջանին հրատարակած «Էջեր Փակ Գորոցներից» խորագրեայ մեծկակ հատորին մէջ: Վերջին հանդիպումս տեղի ունեցաւ 2000 թուականի ամրան, երբ Երեւանի մէջ տպուեցաւ «Բերքահաւաք» խորագրեալ իմ գիրքս, եւ նոյն առիթով Գրողներու Միութեան ու «Սփիւռք» կրթամշակութային հիմնարկին կողմէ կազմակերպուեցաւ գրական ու ազգային-քաղաքական ծառայութեանս յիմնամեակը: Այդ առթիւ չորս խօսողներէն մէկը անխուսափելիօրէն ինքն էր՝ ամենամոռտ սփիւռքագէտը: Յիշելով 1963ի Մաղկաձորի մէջ մեր առաջին հանդիպումը, Հայաստան կամ Լիբանան մեր բազմաթիւ հանդիպումներու շղթան

ՉՔՆԱԴ ՐԱՅԱՍՏԱՆ ՄԱԹԵՍ ԼՈՒԱՍԵԱՆ

Չքնադ Հայաստան, իմ կեանքի արեւ,
Նայիրեան ազգիս լուսավառ արեւ,
Իմ խաչքարերի դու վանք սրբավայր,
Իմ ժողովրդիս հմայք դրախտավայր:
Սիրում եմ ճերմակ քո գագաթներն
Ի՞մ նախնիների յուշ տարիներն,
Քո լայնատարած արցունք գետերն,
Բնիկներիդ լուռ տառապանքներն:
Սիրում եմ քո պարզ աստղազարդ երկինքն,
Հին եւ նորաշունչ իմ հայրենիքս,

նիքն,
Ուշիմ հելլոյով բերած ազատութիւնը
Կեանքի կոչեց մեզ անկախութիւնը:
Սիրում եմ մեղու իմ ժողովուրդը
Եւ ծաղկափթիթ մեր նոր սերունդը,
Ծիլ, ծաղկունք տուող մեր արուեստները
Եւ լուսավառ ստակախառն մտքերը:
Սիրում եմ տառն Մեսրոպեան պայծառ
Դու ուշիմ ազգիս, ուղեղն է վառ
Եւ միւռոնաբոյր երկիրս բազմամարդ
Այդ իմ ազգն է, շունչը հարագատ

ՐԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Հայրենի տուն,
Օրհնեալ առուն,
Քնած թէ արթուն՝
Մտքիս մէջ է
Քո պատ ու անկիւն,
Դարձել ես երազ
Ու տեսիլք անհաս:
Հայրենի տուն,
Իմ սրբութիւն,

Քեզ հետ անցան
Լաւ օրերս
Ու մանկութիւն:
Հայրենի տուն,
Յոյսերիս սիւն,
Շէ՞ն ես արդեօք
Թէ սրտիս պէս
Որք, անճարակ՝
Փլել ես, դառել աւերակ:

յուշերու թուումով հասցուց մինչեւ այսօր: «Բերքահաւաք» ի բովանդակութեան առընչութեամբ միջկուսակցական եւ ներկուսակցական կեանքի բացայայտումներն ու գլխաւոր դերակատարներու ուրուագծումը շատ համանման գտաւ իր «Էջեր Փակ Գորոցներին»-ին հետ եւ բեմին վրան իսկ ողջագուրուելով ինձի օրինակ մը նուիրեց անկէ:

Սակայն, Անկախ Հայաստանի գոյառման, գոյատեւման եւ բարգաւաճման համար իր ամբողջական կեանքը նուիրած այս հայուհին գլացուեցաւ անով խանդավառուելու երջանկութիւնը: Անկախ հայրենիքի ապահովութեան եւ չաւերժութեան համար անոր տեսակէտները, ընդհանրապէս, հակասութեան մէջ էին պետական վերին իշխանութեանց հետ, գանոնք պատասխանատու նկատելով ներկայ դժբախտ կացութեան՝ արդարութեան, մարդկային իրաւունքներու, ազգային իտելաներու հետապնդման եւ տնտեսական ապահովութեան պակասին կամ չգոյութեան համար: Եւ հաւատարմօրէն իր անկեղծ ու յանդուգն նկարագրին՝ իր խոր ծերութեան օրերուն իսկ գրիչը դարձեալ ձեռք առաւ ձաղկելու համար հայրենիքի ներկայ դժբախտ վիճակին յանցագործները՝ Խորհրդարանի անդամներէն եւ նախարարներէն մինչեւ նախագահ՝ փոխանակ լռելու եւ ինքզինքին համար առանձնաշնորհեալ ու հանգստաւէտ պայմաններ ապահովելու:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուած է Օփերային մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսին գլխաւորութեամբ: Հակառակ պատշաճութեան պահանջներն նախագահ Քոչարեան ներկայ չէր, եւ փորձելով իր յարգանքի տուրքը մատուցել, ան ցաւակցազիր մը ուղարկած էր: Ան անշուշտ չէր կրցած մոռնալ այն բարոյա-

կան հարուածը, որ ստացաւ քաջարի բանաստեղծուհիէն, երբ այս վերջինը հրապարակաջնօրէն մերժեց նախագահական պարգեւներն ու շնորհումները: Հարց է թէ նախագահ Քոչարեանի ներկայութիւնը որո՞ւն համար պատուաբեր եղած պիտի ըլլար, արդէն մեռած բայց անմահ բանաստեղծուհիին, թէ տակաւին ապրող բայց մահկանացու նախագահին:

Յուզարկաւորներու պահանջներն վրայ դադարը հետիոտն եւ ուսամբարձ տարուած է Օփերային մինչեւ Պանթէոն: Քոչարեանի բացակայութեան գուգահեռ՝ ուշագրաւ եղած է նաեւ վարչապետ Ա. Մարգարեանի եւ պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեանի քաղաքներու զանգուածէն անջատուած իրենց հանգստաւէտ ինքնաշարժերով հետեւելու համար թափօրին: Նախագահ Քոչարեանի ժխտական վերաբերումին ազդեցութիւնը տեսնուած է նաեւ Պանթէոնին մէջ, ուր «որեւէ գրող իր հոգու խօսքը չասաց»: Ան ի պատշաճութիւն ուղերձներ կարդացր են Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան ու Գրականութեան ինստիտուտի տնօրէն Ազատ Եղիազարեան: Խօսք առած են նաեւ ճարտարապետներու Միութեան վաստակաւոր նախագահ եւ հանգուցեալին հայրենակից ու մտերիմ վարագրատ Յարութիւնեանը, ինչպէս նաեւ սաղիմասայ գրող ու բանաստեղծ Անուշ Նազգաչեանը:

Նախագահներ ու նախարարներ կու գան ու կ'երթան, մինչ չաւերժութեան փառքը կը պատկանի միայն արժանաւորներուն, որոնց գլխաւորներէն մին էր Սիլվա Կապուտիկեանը: Այսպէս էր Սիլվան, այդպէս ծնած էր եւ այդպէս ալ ապրեցաւ ու մեռաւ: Ինչ մեռնիլ... ստող մըն էր որ շիջեցաւ իր փայլով եւ երկրի վրայ ձգած հետքով անզուգական աստղ մը՝ որուն չիշատակը չաւերժափայլ պիտի մնայ:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԱՌՈՐԵԱՅ ՄՈՒՍԱ ԼԵՈՑԻՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ ՕՐԵՐԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ:

Ամէն տարի Հայաստանի մէջ մեծ շուքով կը նշուի Մուսա Լեռան հերոսամարտի տարեդարձը: Այս տարի եւս, Սեպտեմբերի 24-ին, աւելի քան 50,000 հայորդիներ կը սպասուին Մուսա Լեռան նուիրուած յուշահամալիրի շուքը, տօնակատարելու իրենց հայրերուն սխրանքը:


Կողքի սիւնակներով կը ներկայացնենք «Բնօրրան» հանդէսի թիւ 14-16 համարէն վերցուած երկու գրութիւններ: Մին, տակաւին հայաբնակ Վաքըֆ գիւղէն խապրիկ մը, եւ միւսը, «Մուսալեռ» հայրենակցական միութեան նախագահ, Կարօ Տէր Պետրոսեանի խօսքը:

Մուսալեռցի հայրենակիցները ամէն տարի Սեպտեմբերեան օրերին կը հաւաքուին թմբուկ զարնելով, ոտքերնին ամուր գետնին զարնելով, որ հայրենի հողին շփումովը ոտքերնին աւելի զօրեղ ըլլայ եւ բարբառն ալ բարձրահնչուն...

Մուսալեռցի հայրենակիցները որպէս սուրբ գիրք կը կարդան իրենց «Մուսալեռան 40 օրերը» ամէն տարի ծայրէ ծայր մինչեւ Սեպտեմբեր եւ Սեպտեմբերէն յետոյ կը պատմեն սերունդներուն որպէս պատգամ՝ չմոռցնելու մեծ մուսա-

կ'ողջունեմ թուրքիայի Հանրապետութեան մէջ գոյատեւող միակ հայկական գիւղի անունով, միակ կենսունակ հայ օճախի անունով, այն օճախի, որ չնայած բոլոր դժուարութիւններուն ամուր կը գոյատեւէ, կը գոյատեւէ իբրեւ բացառութիւն Արեւմտեան Հայաստանի բոլոր քաղաքների, գաւառների, կը բարգաւաճի եւ կը պահէ իր կենսութիւնը:

Այսօր ես ձեզի կ'աւետեմ, որ պաշտօնապէս հիմնադրուած եւ վաւերացուած է մեր Բնօրրանի Մու-



Մուսա Լեռան հերոսամարտին մասնակցած խումբ մը Հնչակեան նախկին մարտիկներ, Վաքըֆի Հնչակեան Գաղափարներին մէջ, 1928-ին: Աջին ռոտի կեցած՝ Զաքար Կարապետեան:

լեռցիներու սխրանքը, յորդորելով պնդելու համախումբ ըլլան, իրենց սրտերը լեցնեն նորոգ հայրենասիրութեամբ, պատրաստ կանչի պահու՝ պաշարի հրաւիրող փողահարի, որ այլեւս մէկ պատատ հող չտրուի թշնամիին, որ մեր սիրելի մայրերը ծնեն Հայաստանի համար մուսալեռցի գաւակներ՝ Հայրենիքը պահող, զօրացնող եւ բարգաւաճ դարձնող գինուորներ...

Միւսը հայրենակիցների, հազար ողջոյն Մուսալեռէն, հազար ողջոյն Վաքըֆ գիւղէն: Մեծ ուրախութեամբ Վաքըֆ գիւղի մուսալեռցիներու անունէն կ'ողջունեմ ձեզ,

սալեռ հայրենակցական միութիւնը, եւ կը հաւատամ եւ կը վստահեցնեմ, որ աւելի սերտ կը դառնան Բնօրրանի Մուսալեռան եւ Հայաստանի Մուսալեռան կապերը, եւ մենք Երեւան, Հայաստան կու գանք տօնախմբութեան պատուիրակութեամբ, իմբերով եւ նաեւ Աստուածածնի տօներին Վաքըֆ գիւղի մէջ կը վայելենք Հայաստանէն եկած պատուիրակութիւններու, բազմամարդ խումբերու ներկայութիւնը... Աստուած մեր գործին յաջողութիւն տայ:

Հայրենակից Վաքըֆ գիւղից

«ԿԱՅԾ»
Երիտասարդական Նուագախումբը
Պետք Ունի
Հայերէն երգերու Ծանօթ
Երիտասարդ Երգիչ Կամ Երգչուհիի
Հետաքրքրուողները Կրնան
Հեռաձայնել Ռազմիկին՝ 818-590-2824

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

ՄԻ ԽԱՌՆԷՔ ՄԵՋ ՁԵՐ... ԱՐԶԻ ՑԵՂԵՐԻՆ

Մուսալեռան հերոսապատումը սկիզբ է առել դարերի խորքից եւ եկել հասել է 21րդ դար:

20րդ դարի սկզբին հայ ժողովրդի համար մղձաւանջային տարիներին, դարձեալ փայլատակեց հայի հերոսական ոգին՝ Սասունի, Զէյթունի, Վանի, Շապին-Գարահիւարի, Ուրֆայի, Հաճընի, Այնթապի, Մուսալեռան եւ այլ հայկական օճախների հերոսապատումներով:

Մուսալեռան հերոսամարտը սուր է հպարտութիւն հայութեանը, սուր է իր ուժերի նկատմամբ հաւատ, ապագայի նկատմամբ յոյս եւ իղձերի կատարման սպասումներ: Եւ այդ յոյսով եւ հաւատքով 1988ին հայութիւնը՝ մէկ բռունցք դարձած, պաշարեց եւ ազատագրեց Արցախը: Սակայն մեր հերոսամարտը չի աւարտուած, դեռ մեր սուրը չենք դրել պատեան:

Ճիշտ է, այսօր չկան գոհեր, չկայ թափուող արիւն, բայց կայ գոյութեան կոխ:

Այսօր ոտք ենք դրել յաւերժութեան ճանապարհին, մեր ազատ ան-

կախ Հայաստանի գոյութիւնը փաստ է: Ունենք ազատ անկախ պետականութիւն, պետական բանակ, պէտք ունենք պետականութեան հզօրացման, որը ապագայ մեր բոլոր իրագործումների յենարանը պիտի դառնայ:

Ուրեմն հայը՝ լինի Հայաստանում, լինի աշխարհի հորիզոններում պիտի սովորի, պիտի աշխատի, պիտի ստեղծագործի յանուն Հայաստանի, յանուն մեր պայծառ ապագայի եւ, այսօրուայ դժուարութիւնների մէջ չընկրկելով, պիտի նայի դէպի առաջ, իսկ եթէ պէտք լինի, կրկին գէնքով պիտի ելնի թշնամու դէմ եւ նրա երեսին գոչի մեծ Տէրեան բանաստեղծի խօսքը.

- Մի խառնէք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին, Մեր երկիրը... սուրբ է եւ հին...

Շատ է տեսել երկիրն... ցաւ ու արհաւիրք... Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամէն քար...

ԿԱՄՕ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
(Մուսալեռ« Հայ. Միութ. նախագահ

ՃԱՆԱԳԻՐ ԻՆՔՂ ԲԵՋ

Ա. ԱՓԻՆԵԱՆ

Յօդուածը՝ գրուած Պոէտի կողմից, ուղղուած է համայն հայութեանը: Յօդուածիս նպատակն է ներկայացնել արժանապատիւ մարդու կարգավիճակը: Նախօրօք ուզում եմ ասել, որ ինձ համար մեծ մարդը նա չէ, որ մեծամեծ բաներից է խօսում, այլ նա, ով փոքրիկ բաները նկատելով արժանացնում է մեծ ուշադրութեան:

Ոմանց թոււմ է, թէ հայրենասիրութիւնը միւսների «կոկորդը կրծելու» կամ միւսներին անարգելու մէջ է, թէեւ իրականութեան մէջ հայրենասիրութիւնը սկիզբ է առնում մարդասիրութիւնից: Եթէ մի մարդ չի կարող ընդունել դիմացինին ինչպէս որ կայ անհար է, որպէսզի կարողանայ ընդունել այն մաքրուած գաղափարը, թէ ով է մարդը, խումբը, պետութիւնը եւ համընդհանուր նպատակային գործելակերպը: Ոչ մի դարում եւ ոչ մի անգամ ֆանատիզմը եւ ֆաշիզմը դրական արդիւնք չի տուել ոչ անհատին, ոչ էլ հանրութեանը, այլ ծնել է կոյր եւ աւերիչ մօտեցում անհատի հոգեբանութեան մէջ, որ ապացուցներն են մամուլում ներկայացուցող յօդուածները լցուած գայրոյթով եւ վիրաւորելու մոլուցքով դէպի այն անհատը, ով (բանաստեղծուհի Նայիրի Յովհաննէս, որին ճանաչում եմ անձամբ եւ գիտեմ նրա մարդասիրութեան եւ հայրենիքի ու հայրենակիցների նկատմամբ անշահախնդրօրէն ունեցած մտահոգութեան չափը) առաջարկում է նրբանկատ եւ անթշնամանք մօտեցում դէպի իւրաքանչիւր անհատը՝ Մարդը:

Եւ ցաւալին այն է, որ մարդասիրութեան գաղափարը հարուածի տակ է, իսկ ատելութիւնը՝ քաջալերման: Պէտք է բաժանուել մէկ կողմից՝ կուսակցական նեղմիտ գործարարների եւ միւս կողմից՝ ընդհանրական-համահայկական նպատակներ հետապնդող «բանակների» եւ պատերազմ յայտարարել խաղաղութեան փոխարէն. դա բերում է կրքերի անհանգիստ բախման եւ իրար ոչնչացման. ինչ է նշանակում՝ մի խումբ տղամարդկանց եւ կանանց անարգել անպատասխանատու կերպով ու ուզեմալ... հերոսանալ: Ատելութիւնը կոյր է եւ տգէտ: Ատելութեամբ հարցին մօտեցում են միայն հիւանդագին տեսանկիւնից:

Դա հիւանդութեան մի տեսակ է, որի պատճառն է ցաւը կամ սխալ տեղեկութիւնը: Կոյր հասարակութեան մէջ ատելութեամբ նոյնիսկ կարող են թուլակ հերոսներ: Խօսքս այս վերջին յօդուածի մասին է, որը գրել էր իբրեւ Գուսան Ապեր իսկանդարը: Նրա յօդուածագիրներ Սարգիս Ղլեանի եւ Սեդա Յովհաննիսեանի հետ, որպէս համագործակից արիւնահոգութեան եւ «կոկորդ կրծելու» գործում:

Անկեղծ սասճ, նպատակս այս մարդկանց ցածրացնելը չէ եւ ոչ էլ դատապարտելը, այլ ուշադրութեան հրաւիրելն է նրանց եւ իրենց համախոհներին, որ մարդը ապրում է իր ազատ կամքով եւ ունի ազատ ընտրութեան իրաւունք բոլոր տեսակետներում: Այդ իսկ պատճառով որեւէ մէկը իրաւունք չունի բռնանալ մարդու տեսակետի եւ ընտրութեան վրայ:

Օրինակ, Սարգիս Ղլեանը եւ միւսները իրենց յօդուածներում ասում են, որ «դաւաճան» են այն հայերը, ովքեր համագործակից չեն իրենց նպատակին: Կարծելով, թէ իրենց ընտրած ճանապարհը միակ ճշմարտի ճանապարհն է հայապահպանութեան գործում: Այդ պատճառով նրանք հաւաքում են իրար գլուխ եւ ծրագրում, թէ ում հասցէին թափեն իրենց ներքին մաղձն ու թոյնը: Եւ երեխայական միամտութեամբ հաւատում են, որ հատուածի, որ արդէն իսկ ունի անհաստատ միտք ու տատանուող կարծիք: Ես՝ որպէս Պոէտ եւ տիեզերքի քաղաքացի, քննելով նիւթն ամէն կողմից, եկայ այն եզրակացութեան, որ այս տեսակ մարդկանցից պակասում է մի շատ կարեւոր բարոյական կրթութիւն այն առումով, թէ Ով է Մարդը եւ ինչպիսի փոխարեքութիւն է պէտք ստեղծել մարդ-մարդու հանդէպ, որպէսզի գոյանալով մեծանայ սէրն ու միութիւնը:

Առանց որեւիցէ հեզանքի կարող եմ առաջարկել իմ աջակցութիւնը Սարգիսին, Գուսան Ապերին, Սեդային եւ թշնամութեամբ լիցքաւորուած այլ անձանց՝ օգնելու նրանց ազատուելու սեփական տկարութիւնից, որ է ատելութիւնը: Եւ խոստանում եմ, որ դրանից չի պակասի նրանց հայրենասիրութիւնը, այլ հակառակը՝ կ'աւելանայ եւ կը սկսեն սիրել նոյնիսկ իրենց կողմից «դաւաճան» անուանուած իրենց ոչ համախոհ հայ եղբայրներին եւ քոյրերին:

ՈՂՋՈՅՆ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՈՒՊՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 15 ԱՄԵԱԿԻՆ

Շարունակում է էջ 1-էն

կարծիք յայտնեմ: Բան մը պէտք է տաս նախ, որ նոյն ատեն կարծիք տաս» ըսած էր 8-ն (28):

Իր ընտրած ասպարէզին մէջ մասնագիտացած, հոս ծնած, հոս մեծցած, հոս ուսանած քրտնէ՛լ՝ Վ. (33), որ գիտէր միայն թէ իր երկիրը դեռ նոր անկախացած էր, դիտել տուաւ թէ «կրնար առարկայական գնահատութիւն մը կատարել եթէ ծանօթ ըլլար միաժամանակ անկախութիւնը նախորդող եւ ներկայ ժամանակներուն ունեցած պայմաններուն: Ինչ ալ ըլլան տուեալները, պիտի միշտ աշխատիմ հայրենիք գորացնելու համար: Ան մեր «moral» դրամագլուխն է» ըսաւ ան:

24 տարեկան Նիք ըսաւ. «Business»-ն է կեանքի նպատակը, մնացածները՝ գարդեղէններ են: Հիմնականը դրամը չէ: Եկէ՛ք, ասկէ վերջ խօսիմք այդ բոլորին մասին: Եթէ դրամ չունիս, ամէն ինչ փուլ կու գայ...»:

Տարբեր երկիրներէ եկած եւ այլազան գրադմունքներու տէր, տարբեր տարիքի երիտասարդ, միջին հասակի մարդիկ են անոնք, որոնց հետ կը գրուցեմ լողաւազանի մը շուրջ: Մանրամասնութիւններու երթալ կարելի չէ: Նեղ է մեր սիւնակը: Այնուամենայնիւ կարելի կը դառնայ համառօտակի տալ տրուած գնահատութիւններուն պատկերը.

Պրն. Ա. 45 տարեկան է: Կ'ըսէ. «Անկախութեան նշանակութիւնը մեծ է: Ան վէճի առարկայ չի կրնար ըլլալ: Ան մեր նամուսն է: Սրբութիւն սրբոցը»:

Պրն. Գարեգի (50), այլ խօսակից մը, փչ մը յառաջ կ'երթայ. «Հիմա որ ունիմք անկախութիւն, սկսայ ունենալ վախ, որ չունէի առաջ: Զանկա կորսնցնելու վախն է ան: Զայն պահելու համար գորաւոր ըլլամք պիտի: Պետութիւնը կը չարաշահէ ժողովուրդը անօթի, բացի երեւանէն, ան ալ մասնակի կերպով, ամբողջ երկիրը մոռացութեան տրուած, եւ լաւ է չշարունակեմ...»:

Անդիլէն ներկայ մը (36) կը հետեւցնէ. «Ինչ անկախութեան մասին է խօսիր երբ անօթի է երկիրը, գող ու աւագակներու ձեռքի տակ է մեր երկիրը, կը դատարկուի Հայաստանը, երբ մեր բոլորն ու մայրերը կը (բ...) նոյնիսկ թշնամի սահմանակից երկիրներու մէջ, ապրուստի հոգսերով տարուած: Սա ի՞նչ անկախութեան մասին է խօսիր»:

Օրը Շարաթ է: Բաղդը կ'ունենան մտաբանութիւն երեցներու շրջանակի մը մէջ, ուր ընդհանրապէս կը խօսին ազգը յուզող հարցերու մասին: Հոն է արուեստագէտը: Հոն է Հայաստանի մէջ երեք գիւղեր գնած երբեմնի ուսուցիչ ու ներկայիս բարերար սպիտակահերը: Հոն է հայ գրի ու մշակոյթի ծառայող գրադարանատէրը: Հոն է հայրենակցական միութեան մը վաստակաշատ ատենակապ տալ՝ հանգստեան կոչուած հանրածանօթ քրտնէ՛լը: Հոն է նոյնպէս գիտական գիրքերու հեղինակ, հասարակական գործիչ այլ՝ նոյնպէս հանգիստի կոչուած քրտնէ՛լը: Հոն է անցեալ մը ամբողջ ընկերային փորձառութիւն ձեռնարկող հայ մարդը, եւ ուրիշներ: Հանելի միջավայր մը: Իմ հարցադրումը յարմար մէկ պահուն, դրի սեղանին վրայ:

Ներկաներէն Պրն Յ. առաջարկեց «քօրափն մեր վրայէն ամէն մեծամտութիւն, որ մեր ժողովուրդի գլխաւոր թերութիւններէն մին է որ պատճառ կը հանդիսանայ խոր

վերապահութիւններու: Ուրիշ երկիրներու նման Հայաստանն ալ ունէր իր թերութիւնները: Ինչն ո՞ւ, Հայաստան թերութիւն պէտք չէ ունենայ: Ըլլալի՞՞ք ան է: Կատարեալ բարոյականով երկիրու ժողովուրդ գոյութիւն չունի: Ամէն ինչ ընելու է գորացնելու համար մեր անկախութեան նպատակը կառոյցները, ձեռքազատուելու ենք մեր ամբողջատիրական «utopia»-էն:

Իր հերթին, ըսաւ Տիկ. Ա. «Տակաւին 15 տարու մնալու մըն է Հայաստանի հանրապետութիւնը, անպայման սխալներ պիտի գործէ: Բաղդատեցէ՛ք երբեմն խորհրդային Միութեան բաղկացուցիչ միւս հանրապետութիւններուն հետ, անոնց մէջ անելի լա՞ւ է, թէ անոնց մէջ անելի վատ է: Իմ գնահատութեամբ անելի լաւ է, վկայութիւնները շատ են այդ կապակցութեամբ, միակողմանի պէտք չէ դառնալ»:

Պրն. Գ. դիտել տուաւ. «Անշուշտ թէ հպարտ ենք մեր անկախութեամբ: Լաւն հասնելու համար սակայն մարդոց սխալները պիտի խարագանենք. այլապէս, քաղաքական, ներքին, վարչական, ընկերային եւ այլ մարգերու մէջ կ'իրարկուող անբարոյութիւնները, անօրինակութիւնները զուտ կ'առնեն կ'երթան: Ինչն ո՞ւ չափանիշ ընդունիմք ուրիշներու վիճակը: Թերութիւնները մարդկային են, բայց գիտակցաբար գործուող սխալները միանգամայն դատապարտելի»:

Պրն. Հ., որուն մտորումները զինք շատ հեռուները տարին, ամփոփուելու համար իրեն համար իրագործելի, իսկ ունեց համար մտացածին utopia թուացող առաջարկութեան մը սահմաններուն մէջ. «Ազգի մեծագոյն մասնագէտներով կազմել վերին մարմին մը, որուն պարտականութիւնը ըլլայ որոնել նամբանք՝ մեր ժողովուրդը դուրս բերելու համար իր ներկայի անել, կազմալուծող վիճակէն, որուն վերջը քայքայում է: Մեր ժողովուրդը տեղատուութեան մէջ է: Հայրենիքը կը դատարկուի: Երկրի ապագան վտանգուած կը տեսնեն մարդիկ: Տարակոյս չկայ, հայրենիքի քայքայումը՝ նաեւ քայքայումն է Սփիւռքին: Մեր փրկութիւնը այդ արտակարգ Task Force-ի գործունէութեան մէջ կը տեսնեմք»:

Հոս կանգ կ'առնեմ:

Կարելի չէ մէկ շունչով տալ դիտումնաւորապէս կամ պատահականօրէն հանդիպած գրուցակիցներուն երկար շարքին տպաւորութիւնները, որոնք բաւարարատալ կը մատուցեն կատարելու համար կարգ մը եզրակացումներ:

Մեր նոր սերունդի հսկայ բազմութիւն մը փաստօրէն անտարբեր վերաբերմունքով կը ցուցաբերէ հանդէպ իր հայրենիքին, որուն ծանօթ իսկ չէ: Հակառակն ալ նիշդ է: Սկսած մեր անկախութեամբ խանդավառ երիտասարդ սերունդէն եւ մինչեւ անով տագորտուած ու մերթ անոր պահպանման կարելիութիւններով մտաւոր միջին ու երեք տարիքի ներկայացուցիչները, կը պարզեմ մէկ նշմարութիւն, որ անոնք բոլորն ալ հաւասարապէս կ'ապրուած կը մնան իրենց հայրենիքին, անոր անկախութեան ու բարգաւաճման: Անոնք շեշտը կը դնեն իրաւաւորութեան կոչումով: Կոչումներով պատ: Անգամ 24 տարեկան Նիքի՛ «Հիմնականը դրամ չէ, ասկէ վերջ խօսիմք այդ բոլորին մասին» հաստատումը՝ իր ձեւին մէջ գայթակղեցուցիչ, բայց խոր

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՀԱՐԺՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Շարունակում է էջ 13-էն

մի ղեկավարներ ու հայերի «կեղծ կրօնափոխութիւնը» շրջանի շատ ժողովուրդներ ու եկեղեցիներ ընդունեցին մեծ ցնցումներով ու վախով, որպէս իրենց սեփական կործանման նախանշան: Անհրաժեշտ է ի մտի ունենալ, որ այդ դարաշրջանում գոյութեան պայքար էր գնում գրողաշտականութեան ու քրիստոնէութեան միջեւ: Վարդանանցը մեծ գոտեմարտի վճռական էջերից էր: Վարդանանց պարտութիւնը չէր կարող իր ազդեցութիւնը չունենալ գոյութեան այդ պայքարի ընթացքի վրայ: Չմոռանանք, որ հայերը միտակցեցին, որ Յակոբէրտի պաշտ չէին հրաւիրուած ու պատասխանուած էին Մեծ Ատենանի առաջ: Նրանց հետ էին վրացի եւ ադուան աւագ նախարարները եւս:

Ղազար Փարպեցին Հայաստանի քաղաքական ու ռազմավարական նշանակութեան մասին խօսելիս ընթացողի ուշադրութիւնը հրաւիրում է մի քանի այլ կէտերի վրայ: Նա վերլուծելով Սասանեանների քաղաքականութիւնը նկատել է տալիս, որ նրանք դիւրութեամբ կարող են կովկասի ժողովուրդներին կրօնափոխ անել, ձուլել, եթէ իրենց յաջողութիւն վերացնել հայերի ազգային, կրօնական, ռազմական, տնտեսական ինքնուրոյնութիւնը: Նրանք նաեւ համոզուած են եղել, որ Հայաստանը ըստ էութեան, բոլոր կողմերով ու լրիւ պարսկականացնելով նրանք այլեւս չեն վախենայ քրիստոնէայ բիւզանդիայից ու շրջակայ քրիստոնէական աշխարհից: Ինչպէս գիտեմք, մինչեւ 387 թուականը Հայաստանը շրջանի երեք հզօր ուժերից մէկն էր (Պարսկաստան, Արեւելեան Հռոմէական Կայսրութիւն եւ Հայաստան) եւ կը յաղթեր այն երկիրը, որի հետ կը դաշնակցեր Հայաստանը: Հետեւաբար, յաւերժ Հայաստանը ձուլելով իր մէջ, Սասանեանները համոզուած էին, որ անպարտելի կը դառնան:

Այսպիսով, Վարդանանց շարժումը Արեւելքի քրիստոնէական եկեղեցիների փառահեղ պատմութեան հերոսական էջերից է: Պատահական չէ, որ եղիշէն «Վարդանանց Պատմութիւն» գրգռում շեշտում է. «Բայց այստեղ ողբը ոչ թէ միայն մի ազգի համար է, այլ շատ ազգերի ու երկրների»:

Յ. Յակոբէրտի կարգադրութեամբ Հայաստան ռազարկուած իմբուն կային այնպիսի հայ հոգեւորականներ ու աշխարհականներ, որոնք ծանօթ էին լոկ երեւոյթի արտաքին երեսին: Նրանք չզիտէին դրա կեղծ կամ երեսանց լինելը: Նրանք ազնիւ մտահոգութիւններից դրդուած հայրենիք լուր են ուղարկում, որ նախարարները խոստմնադրուժ դարձած պարսկական բանակով ու մոզքերով գալիս են եկեղեցիները քանդելու, ժողովրդին բռնի կրօնափոխ դարձնելու եւ երկրում ատուշաններ կառուցելու համար: Այդ տեղեկութեան հիման վրայ

Հայաստանում ծայր է առնում տարերային ժողովրդական ինքնապաշտպանութիւնը, ապստամբութիւնը: Վերջինիս անհրաժեշտութեան ու հիմնադրուածութեան հարցերի քննարկման բովոլում ընդդիմութեան հասնող տարակարծութիւններ ծագեցին Հայաստանի նախարարների միջեւ ու կազմաւորուեցին Վարդան Մամիկոնեանի եւ Վասակ Սիւնիի գլխաւորած հակադիր ճակատները: Վարդան աստիճանաբար աւելի ու աւելի հաւատաց ու կառնեց ժողովրդական ապստամբութեան գաղափարին, երբ Վասակ աւելի ու աւելի թերահաւատ դարձաւ այդ ապստամբութեան նկատմամբ՝ մանաւանդ երբ Բիւզանդիա հրաժարուեց օգնել հայերի գլխաւորած կովկասեան դաշնակցութեան: Հաւանական կարելի է նկատել նաեւ այն վարկածը, որ Վարդան այդ ապստամբութեան մէջ ընդունեց երկու հաւասարազօր միտումների, խնդիրների, առաքելութեան առկայութիւնը՝ կրօնականի ու քաղաքականի: Դրա մէջ նա տեսաւ հայ ազգի ձուլման վտանգը, քանի որ սպառնում էր կաթողիկոսութեան, հայ բանակի ու նախարարութիւնների վերացման ճանապարհով վտանգել ազգի միասնութեանը, կենսունակութեանը ու գոյութեանը: Վասակ այդ ապստամբական շարժումը դիտեց որպէս Պարսկաստանի կենտրոնական իշխանութեան եւ հպատակուած ժողովուրդների միջեւ տարբեր վայրերում եւ տարբեր ժամանակներում բռնկուող սովորական առճակատում: Այդպիսի ընդվզումները սուսնի նման երեւում ու անհետանում էին ու չէին սպառնում հպատակների ազգային գոյութեան: Նկատի ունենալով Պարսկաստանի պատմութիւնը նա չէր հաւատում կրօնական առճակատման վտանգաւորութեանը:

Այս տեսակէտը կարելի է հիմնաւորել առնուազն երկու փաստարկներով: Դեռ Մեծ Ատենանի առաջ պատասխանելու օրերին, ապստամբները գտնում էին, որ եթէ իրենք մի կերպ ազատուեն պաշտի անմիջական սպառնալիքներից ու սուսն վերադառնան, հնարաւոր կը լինի մի կերպ լեզու գտնել ու շարունակել նախկին վիճակը: Ուշագրաւ է, այս կապակցութեամբ, մոզպետի խոստովանութիւնը Մարզպանին՝ ի տես ապստամբութեան յաղթական ավարտին: Նա բերում է Շապուհ Բ.ի (310-379) անփառունակ հակաքրիստոնէական պայքարը ողջ կայսրութեան տարածքով մէկ: Նա գործադրելով դատանադր ընդդէմ վերացնել քրիստոնէութիւնը եւ հարկադրուած վերականգնում է այլադաւանների պաշտամուտը իրաւունքը: Հնարաւոր է, որ Վասակ կարծել է, որ հնարաւոր է նոյն արդիւնքի հասնել առանց Սասանեան գահին դէմ ապստամբելու:

(Շարունակելի - 2)

Ֆին մէջ նիւթական հնարաւորութիւններու ու ժողովրդական հրամայականը շեշտող մտածողութիւն մըն էր, որ կոչուած է օգնելու հայրենիքին: Մեր մէջքերած անհատներու շարքին շատ շատեր, անշուշտ խստօրէն ճաղկեցին հայրենիքէն ներս տիրող ընդվզեցուցիչ երեւոյթները, որոնք գիրքի մէջ կը հետազոտուին հայրենիքէն... Անկախութեան տօնակաւ այս առիթով տեղին չէ ծառանալ այդ խոր

ցերուն վրայ: Հայրենի անկախութեան ձեռքբերումը իմենին նոր հրաշագործութիւն մըն է մեր ազգի պատմութեան մէջ: Անով նուիրագործուեցաւ ազգային դարաւոր, այլ անկախելի կարծուած երազ մը, որուն վրայ պիտի գորգուրացուի ազգով մէկ: Մեր անցեալը՝ անվերջանալի կորուստներու շարք մըն է: Նոր կորուստ մը կը նշանակուին ներս ըլլալ: Եկէ՛ք, այդ մէկը խնայելով մեր բոլորին մայր հայրենիքին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.*



A NEW ARMENIAN EDUCATIONAL INSTITUTION

AGBU PASADENA HIGH SCHOOL

TO MEET THE SCHOLASTIC, DEVELOPMENTAL AND SOCIAL NEEDS OF OUR YOUTH IN PASADENA, GLENDALE, BURBANK AND SURROUNDING COMMUNITIES IN THE SAN GABRIEL VALLEY

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School, a College Preparatory High School Serving the Greater Los Angeles Armenian Community for 30 Years.

NEW STUDENTS ARE WELCOME DURING SEPTEMBER

- Enrollment open for students in Grades 9, 10 and 11 for the first year.
- First High School Graduating Senior Class in June 2008.
- Offering a challenging college preparatory academic program in a safe, caring and supportive environment.
- Armenian program to focus on the Armenian identity, culture, history and rich heritage of the Armenian people.
- Financial assistance available for qualified families.

SESSIONS STARTED AS OF TUESDAY, SEPTEMBER 12, 2006

For further information and how to register your child, please call (626) 794-0363 or (818) 883-5379

AGBU High School - Pasadena
2495 E. Mountain Street, Pasadena, California 91104
www.agbuphs.org

AGBU IN ITS SECOND CENTURY. A Centennial Symposium. "Tribute to the Past - Pathways to the Future"

Presented by:
AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE
In Cooperation with
USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
Part of USC College of Letters, Arts & Sciences

SATURDAY, OCTOBER 28, 2006

9:30 AM – 3:30 PM
University of Southern California, Town and Gown
Figuroa and Exposition - Gate 3 Entrance
Los Angeles, CA

Overview of Global Activities of AGBU with a focus on United States and Armenia

- The Seminar will Address:
- Organizational Structure
 - Cultural and Educational Activities
 - Sports, Youth, and Young Professionals Programs
 - New Challenges and Opportunities
 - Constituency Development

- Paper Presentations by:
- DR. R. HRAIR DEKMEJIAN**
(USC)
 - MS. RAMELA ABBAMONTIAN**
(PhD Candidate, UCLA)
 - DR. MIHRAN AGBABIAN**
(President Emeritus, American University of Armenia)
 - DR. HARUTYUN ALEXANYAN**
(Armenian State Pedagogical University, Yerevan)
 - REV. FR. KTRIJ DEVEJIAN**
(Mother See of Holy Etchmiadzin)
 - DR. MATTHEW JENDIAN**
(CSU Fresno)
 - DR. SILVA KARAYAN**
(California Lutheran University)
 - DR. ANI MOUGHAMIAN**
(LA Unified School District)
 - DR. ANI YAZEDJIAN**
(Texas State University)
- Special Guest Speaker:
HON. PAUL R. IGNATIUS
Former

Secretary of the Navy - Under Secretary of the Army - Assistant Secretary of Defense

Complimentary breakfast, lunch and snacks will be served

Attendance is by reservation only – Seating is limited

Reservation Deadline: October 18, 2006
Please RSVP at: AGBU Alex Manoogian Center
(626) 794-7942 or seminar@agbuca.org

AGBU CENTENNIAL SPONSORS

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

BANK of ORANGE COUNTY Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

MEMBER FDIC A Division of Placer Sierra Bank

Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720

ՍԱՐՁԱԿԱՆ

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան հինգերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team names, Goals, Points, etc. Includes teams like Չարլթըն, Չելսի, Էվըրթըն.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table showing top teams and their stats: Փորթսմութ, Մանչեսթըր Եունայթըտ, Չելսի, Էվըրթըն.

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտբոլի առաջնութեան չորրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team names, Goals, Points, etc. Includes teams like Վոլսպուրկ, Տորթմունտ.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table showing top teams and their stats: Զերթա Պերլին, Նիւրնպերկ, Պայերն Միւնխի.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան երկրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team names, Goals, Points, etc. Includes teams like Ռեճինա, Ինթեր Միլան.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table showing top teams and their stats: Ա. Էս. Ռոմա, Փալերմո, Աթալանթա.

ՄՏԵՐԻՄ ԽՕՍԸ՝

Շարունակուած էջ 7-էն

ցիններու եւ գիւղացիներու վիճակի բարելաւման:

3. Հայրենի ժողովուրդը ինչպէ՛ս, ի՞նչ տրամաբանութեամբ եւ ի՞նչ սիրտով պիտի պահէ, պահպանէ եւ վաղը թշնամիին դէմ պաշտպանէ այսօր հանդիսաւորապէս զարգացման կանչուող այս քաղաքներն ու գիւղերը, հայրենի՛քը, որ ներկայիս անիրաւութեամբ իրմէ խլուած է անպատասխանատու սակաւթիւ վերնախաւի մը կողմէ: Սարտարապատեան փառապանծ դիւցազունները իրենց արեան գինով փրկեցին հայրենիքը, աւելի ուշ՝ իրենց յաջորդները նոյն խոյանքով ազատագրեցին մեզմէ յափշտակուած Արցախը, որովհետեւ աւելի լաւ գալիքի մը հաւատքն ունէին եւ յոյսը: Այսօր մոխիրներու հաստ խաւին տակ հագիւ զգալի է այդ հաւատքին ջերմութիւնը, յոյսին լոյսը: Վերջին տարիներուն իր նիւթական հնարաւորութիւնները անհամեմատելի չափերով բազմապատկող, տարածաշրջանին մէջ իր դիրքերը աննախընթաց արագութեամբ ամրապնդող, քարիւղաղիւանագիտական նեցուկով իր միջազգային թիկունքը հզօրացնող ու մեզ շրջափակող թշնամիին դէմ իրական պաշտպանութեան եւ ազ-

գային-պետական վերապրումի ի՞նչ միջոցներ նախատեսուած են Հայաստանի Հանրապետութեան պատասխանատուներուն կողմէ:

Հասկնալի է թէ քանի մը օր տեւողութեամբ համաժողովի ծիրին մէջ կարելի չէ սպառել մեր առաջադրած հարցերու նոյնիսկ ներածական բազմակողմանի ուրուագծումը: Երկարժամկէտ ծրագրով հետապնդելիք, խորացուելիք ու կենսագործելիք խնդիրներու մասին է խօսքը:

Այսքանը՝ ինչ կը վերաբերի Հայաստան-Սփիւռք երրորդ Համաժողովի հայեցակարգին: Կարելորն այն է որ, առանց յապաղումի, անխախտ իրապաշտութեամբ ուսումնասիրենք մեր հիմնահարցերը, կորովի հաստատակամութեամբ դիմագրաւենք լեռնակուտակ խոչընդոտները, ընկերային-քաղաքական իրական եւ իրապաշտ պատասխաններ տանք մեր գոյատեւման դէմ սարքուող իրական դաւերուն: Սպասողական թուլութեան, մափիական կողոպուտի, գուտ զբօսաշրջական գազաթափողովներու, արուեստական մանկական անգիջողութեան, երազատես մեծխօսիկ ամբողջովարութեան եւ անբարտաւանութեան յատկացնելու տեղ կամ ժամանակ չունինք այլեւս: Ճշմարտութեան պահն է:

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան վեցերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team names, Goals, Points, etc. Includes teams like Սըտան, Նանսի, Վալանսիէ.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table showing top teams and their stats: Լիոն, Մարսէյլ, Նանսի, Թուլուզ.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան երրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team names, Goals, Points, etc. Includes teams like Տեպ. Քորունա, Ռէալ Մատրիտ, Վալենսիա.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table showing top teams and their stats: Սելիլա, Պարսելոնա, Վալենսիա, Ռէալ Մատրիտ.

Advertisement for PAPA.C. featuring text in Armenian and a logo. Text includes 'ՃԱՇԿԵՐՈՅԹ - ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ՝ ԵՐԵՒԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ'.

Advertisement for HARUT DER-TAVITIAN, HYE INSURANCE SERVICES. Includes contact information: 1807 W. Glenoaks Blvd., Suite 202, Glendale, CA 91201. Tel: 818/502-3233.

ՇՈՊԵՐԱՆԳԻՍ



ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒՐՖԱԼԵԱՆ

Հանգուցեալ Անդրանիկ Ուրֆալեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Սեպտեմբեր 2006ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, 500 S. Central Ave., յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ.-
- Այրին՝ Խաթուն Ուրֆալեան
- Զաւակները՝ Վարուժան Ուրֆալեան եւ գաւակները՝ Անդրանիկ, Արմէն եւ Ալիք
- Բաժի Ուրֆալեան եւ գաւակները՝ Մենուա եւ Թարա
- Անի եւ Յակոբ Բագրատունի եւ գաւակները՝ Աշոտ եւ Լալէ (Լիբանան)
- Նայիրի եւ Վիգէն Ղարիպեամ եւ գաւակները՝ Հրակ եւ Սեւակ Սարգիս եւ Լաուրա Ուրֆալեան եւ գաւակները՝ Դալար եւ Սեպուհ Սեւան եւ Հարօ Մհերեան եւ դուստրը՝ Արփա Հացպանեան
- Մարալ եւ Փօլ Եսայեան եւ գաւակները՝ Մեղրի, Ափօ եւ Ուռի Քենին՝ Լուսին Արմենակեան եւ գաւակները՝ Սօսի, Արփի եւ Վարդան (Անգլիա)
- Քրոջ գաւակները՝ Գէորգ եւ Ռոզէթ եւ Քրիստափոր Քէշիշեաններ եւ գաւակները (Լիբանան)
- Նուարդ եւ Զարեհ Քէշիշեաններ (Լիբանան)
- Մարօ եւ Սիլվա Քէշիշեաններ
- Դրօ եւ Էնճի Քէշիշեան եւ դուստրերը
- Աներձագին կինը՝ Մարգարիտ Շէրպէթեան
- Աներձագին գաւակները՝ Հուրի եւ Մովսէս Թասլաքեան եւ գաւակները (Հայաստան)
- Սերոբ եւ Մարթէն Շէրպէթեան եւ գաւակները (Զուլիցերիա)
- Նորայր եւ Յասմիկ Շէրպէթեան եւ գաւակները
- Զուարէ եւ Յարութ Եղիայեան եւ գաւակները եւ համայն Ուրֆալեան, Եղծեան, Վարդանեան, Մարգարեան, Քէօսէեան, Պէգճեան, Բագրատունի, Ղարիպեան, Հաքիմեան, Մհերեան, Գրիգորեան, Եսայեան եւ Կարապետեան ընտանիքները եւ հարազատները
- Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, ցաւակցորթիւնները կ'ընդունուին եկեղեցւոյ մէջ:

ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒՐՖԱԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով տիկ. Խաթուն Ուրֆալեան եւ գաւակները խորին շնորհակալութիւն կը յայտնեն թեմիս առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանին, Արեւմտեան Թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանին, Լիբանանի հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպսկ. Խաչերեանին, Վաչէ արք. Յովսէփեանին, Հայր Օգոստինոս Սեքուլեանին, քահանայ հայրերուն, Արեւմտեան Ամերիկայի Ազգային իշխանութեանց, Լիբանանի Ազգային կեդրոնական վարչութեան, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներուն եւ հոգաբարձութեան, Ղարաբաղի նախագահ Արկատի Ղուկասեանին, ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին, ՀՀ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին, քոնկրէտական Էտրմ Շիֆին, Լիբանանի մէջ ՀՀ դեսպան Վահան Տէր Ղեւոնդեանին, Հ.Յ.Դ. Բիւրոյին, Հ.Յ.Դ. Արեւտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէին, Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէին, «Ահարոնեան» կոմիտէութեան, Հ.Մ.Լ.Մի կեդրոնական վարչութեան, Հ.Մ.Լ.Մի Շրջանային վարչութեան, ՀՕՄի կեդրոնական վարչութեան, «Ազդակ», «Ասպարէզ», «Մասիս», «Նոր Օր», «Նոր Կեանք», «Նոր Հայաստան», «Հայ Կեանք» թերթերուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ, հեռաձայնով եւ նամակով մասնակից եղան իրենց սուգին:

Ուրֆալեան Ընտանիք

ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ` 15 ՏԱՐԵԱԿՆ

Շարունակուած էջ 6-էն

մը, որ փոխանակ ընկերային ապահովութեան, արդարութեան եւ անհատի իրաւունքներու պահպանման քաղաքականութիւն մը մշակելու, երկրէն ներս ստեղծուեցաւ մենատիրական, ոչ ժողովրդավարական, մտահոգիչ կացութիւն մը, որ դժբախտաբար տակաւին կը շարունակուի: Այսպէս, երկրի բազմաթիւ տնտեսական շահաբեր կառուցներ կը պատկանին տիրող դասակարգի անհատներուն կամ անոնց կողմէ հովանաւորուող, պաշտպանուող մենաշնորհեալներու: Ներկայ պայմաններու տակ, դժուար թէ կարելի ըլլայ հիմնական փոփոխութիւն մը ակնկալել, եթէ մանաւանդ բան չփոխուի երկրի տիրող դասակարգին մէջ:

ՍՓԻՒՔ-ՅԱՅԱՍՏԱՆ ՓՈՒՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հակառակ Հայաստանի պետութեան կողմէ առնուած երկու կարեւոր նախաձեռնութեանց - «Հայաստան Համահայկական Հիմնադրամ», «Հայաստան-Սփիւռք Երկու Համաժողովներ», երրորդն ալ այս օրերուն, այս փոխ-չարաբերութիւնները կը գտնուին ոչ շատ գոհացուցիչ վիճակի մէջ: Հայաստան եւ սփիւռք իրարու օգնող եւ իրարու անհրաժեշտ միաւորներ են, եւ սակայն մինչեւ այսօր, Հայաստանի պետութիւնը տակաւին սփիւռքին կը նայի իբրեւ ստորադաս եւ միայն Հայաստանի օգնելու վիճակին մէջ: Տեղի ունեցած երկու համաժողովները մեծ խոստովանումներով ճամբայ ելան, սակայն մինչեւ օրս չյաջողեցան իրականացնել կատարուած առաջարկութեանց մեծ մասը: Համաձայն իրար պատահի երրորդին պարագային, մանաւանդ որ այս մէկը կը ծրագրուի յատկացնել սահմանաչին գիւղերու բարելաւման ընդհանուր աշխատանքին: Մինչեւ հիմա կարելի չէ եղած սփիւռքով զբաղող նախարարութիւն մը հիմնել եւ կամ Հայաստան-Սփիւռք Համաժողովին ծնունդ առած մարմին մը ստեղծել: Հայ սփիւռքը իր կարելիութիւններով հարուստ իրակաւութիւն մըն է, որ իր հեղինակաւոր խօսքը պէտք է ունենայ փոխադարձ շարաբերութեանց ճշգրտման եւ քննարկումին մէջ: Յարգ, Հայաստան, գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, սփիւռքին կը մօտենայ միակողմանի մօտեցումով, փոխաւանակ Սփիւռքը նկատելու համահասար ոչ թ: Սփիւռքի դերը կարեւոր է հայ ժողովուրդի պահանջատիրութեան, հայրենի պետականութեան զօրացման, քաղաքական-քարոզչական միջոցներու օգտագործման, տնտեսական միջոցներու խելացի օգտագործման, արտասահմանական գործարարներու ներդրումային ճիգերու համատեղման հարցերուն մէջ: Նաեւ ցարդ առկախ կը մնայ երկաթաքարայինութեան կարեւոր հարցը, եւ անոր վերջնական բիւրեղացումն ու վճռումը կ'ակնկալուի հայրենի պետականութեան կողմէ:

Այս տարի 50րդ տարեդարձն է Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ ստեղծուած տաղնապը, որ մինչեւ օրս կը մնայ անլոյծ:

Ի՞նչ կը վերաբերի աշխարհա-քաղաքական կացութեան, այսօրուայ տուեալներով, աշխարհ կը գտնուի միաբեւեռ կացութեան մը առջեւ անոր համաշխարհայնացման, իրականութեամբ՝ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ գիտութեան տուեալներով: Այս ազդեցութենէն խուսափելը բաւականին դժուար հարց է եւ կը կարօտի դիւանագիտական նուրբ աշխատանքի: Այս ծիրէն ներս կ'իյնայ դարաբաղեան հարցի լուծումը: Անհրաժեշտ է այստեղ կարեւորութեամբ նշել հայ ժողովուրդի միասնականութեան կարեւորագույնը: Յատկապէս պետութիւն-ժողովուրդ ստեղծումը, հաւանական լուծումներ փնտրուելու մէջ: Որեւէ պարտադիր լուծում ի յառաջագունէ մերժելի կը մնայ: Անհրաժեշտ է նաեւ Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովուրդներու համաձայնութիւնը առաջարկուող լուծումներու ընդունման կամ մերժումին համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Հայրենի անկախ պետականութեան զօրացման, ազատագրուած Արցախի պետական կառուցի միջազգային ճանաչման, հայկական դատի համազգային ուժերով հետապնդման, Հայրենիք-Սփիւռք կապերու առաւել զարգացման, հայ եկեղեցւոյ միասնականութեան, «Հայաստան Համահայկական Հիմնադրամի» աշխուժացման եւ ժողովրդավարական գործընթացի հաստատման սկզբունքներով, մանաւանդ գործադրուող շուկայական ճնշիչ շահագործումներու, ընկերային արդարութեան կիրարկումով, կարելի կը դառնայ լաւատես մօտեցում մը Հայաստանի անկախութեան 15րդ տարեդարձին: Այսպէս արդէն իսկ գոյութիւն ունեցող անմխիթար վիճակը դատապարտուած կը մնայ շարունակուելու, որմէ միայն յուսախաբութիւն եւ յոռետեսութիւն կրնան յուսալանալ:

Անկախութեան 15 տարիները առիթ մը կը ներկայացնեն վերանայելու ցարդ որդեգրուած ընթացքը, որմէ պիտի օգտուին ամբողջ սերունդներ, գալիք տասնամեակներու ընթացքին:

Jessica Demirdjian
REALTOR®



California Realty
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com

An independently owned and operated member of Prudential Real Estate Affiliates, Inc.

IMMIGRATION-Ի-ՉՐՅՅՐ
KARLIN & KARLIN, PROFESSIONAL LAW CORP.
 Tel: (213) 365-1555 Fax: (213) 383-1166

Ձեր գաղթականական առկախ հարցերուն համար կապ պահեցէք մեր իրաւաբանական գրասենեակին հետ
 Նախկին պետական քարտուղարութեան
 Immigration-ի մասնագետ
ՊԵՏՐՈՍ ԱՆՍՐԵԱՆԸ
 Կ'օգնէ ձեր հարցերու լուծման
 3701 Wilshire Blvd., Suite 1035, L.A., CA 90010

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐՋԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
GAIDZ YOUTH ORGANIZATION
& ARMENIAN ATHLETIC ASSOCIATION

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ - FREE ADMISSION

Festival

Armenian Independence Day

Sunday September 24, 2006

10AM - 7PM

Verdugo Park, Glendale

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՑ ՓԱՌԱՏՕՆ - 2006 ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ՅԱՅՏԱԳԻՐ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳՐԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ

ՊԱՊԻՆ ՊՕՂՈՍԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈՒԵԱՆ
ԱՐՄԷՆ ԱԼՈՅԵԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿԵԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՀՐԱԶ ՊՕՂԱՐԵԱՆ
ԼՈՒԻԶԱ
ԼԻԼԻԱ ՊԱՐԱՅԻՆ ՀԱՄՈՅԹ
ԵՒ ԱՅԼ ԱՆԱԿՆԿԱԼ ԵՐԳԻԶՆԵՐ

ԵՐԳ - ՊԱՐ - ԱՐՈՒԵՍՏԻ - ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ
ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ - ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՆԱՐՏԻ ՄՐՑԱՇԱՐՔ - ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ



WELLS FARGO
535 N. Brand Blvd.
Glendale



OLD FASHION DELI & GROCERIES



OLD FASHION DELI & GROCERIES
CATERING SERVICES

MEGAMED CLINICAL LABORATORIES, INC.



Glendale West Pharmacy and Medical Supply

Apolitano Grapeseed Oil Co.

Pasadena Piacchi (Men's & Boys Clothing)

Glendale Medical Arts Pharmacy

AMGA CHANNEL 26

FREE PARKING - FREE ADMISSION FREE